14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 224(5076)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Երուսաղեմում պղծել են Սուրբ Խաչ վանքը եւ հայկական գերեզմանատան դարպասը

Երուսաղեմում վանդալները հակաքրիստոնեական մակագրություններ են արել Սուրբ Խաչ ուղղափառ վանքի պատերի եւ հայկական գերեզմանատան դարպասի վրա: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Հույն ուղղափառ եկեղեցուն պատկանող Սուրբ Խաչի վանահայր Կլավդիոսը հայտնել է, որ ինքը վանքի պատերի վրայի գրությունները նկատել է առավոտյան ժամը 4-ն անց 30-ին: Իվրիտերեն արված մակագրություններից մեկը բացահայտ թշնամական է՝ «Մա՛հ քրիստոնեությանը»: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը մեջբերում է վանահոր այն խոսքերը, որ վանդալները վանքը պղծում են արդեն յոթերորդ անգամ:

Բացի դրանից, անհայտ չարագործները փչացրել են վանքի սպասավորներին պատկանող երեք ավտոմեքենաների անվադողերը, իսկ մեքենաների վրա մակագրել են «Երջանիկ Խանուկա»՝ տոն, որ այս օրերին նշում են հրեաները: Հակաքրիստոնեական արտահայտություններ են գրվել նաեւ Երուսաղեմի հայկական գերեզմանատան դարպասի վրա:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն վանդալներին անվանել է «բարոյազուրկ մարդիկ»:

Ենթադրվում է, որ միջադեպերի համար պատասխանատու են աջ արմատական հրեաները: Ոստիկանությունը քննություն է սկսել վանդալիզմի փաստի առնչությամբ:

Իսրայելում ապրում են մոտ 155 հազար քրիստոնյաներ, որոնք կազմում են երկրի ամբողջ բնակչության նվազ քան 2 տոկոսը:

# «Գնացեք հեռու, ես չկամ»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




«Էշին նստելը մի ամոթ է, իջնելը՝ երկու». ժողովրդական այս խոսքը այս անգամ մեր առօրյա վերադարձավ Ծառուկյանի պահով: Լրատվական եւ քաղաքական փոխմիացած դաշտերը այժմ էլ նույն ուժգնությամբ հիմնական թեմա են դարձրել Ծառուկյանի չառաջադրումը ու բոլորը վրա ընկած՝ իմաստնանում են, թե իրենք էս էին ասել կամ գրել, էն էին ասել կամ գրել, ու իրենց ասածով կամ գրածով էլ ամեն ինչ եղավ: Օդը լցված է տարբեր ասեկոսեներով, սեփական աղբյուրների ջրով: Մենք էլ վայրկյանի մի հարյուրերորդ մասով դառնանք սեփական աղբյուրներին դիմող մեր անզուգական լրատվամիջոցների կերպով ու նշենք, որ մեր աղբյուրների փոխանցմամբ էլ Ծառուկյանի չառաջադրման փոխարեն (ինչպես արդեն գրել ենք), նրա չառաջադրվելու որոշումը փոխհատուցվելու է, եւ, իբր, ըստ մեր ամենասեփական աղբյուրների, նախագահական ընտրություններից հետո վարչապետ է նշանակվելու Հովիկ Աբրահամյանը: Բա:

Իսկ այլ լրատվամիջոցների սեփական աղբյուրները ամենատարբեր բաներ են ասում. որ Ծառուկյանի որոշումը հզոր տերությունները Հայաստանից մի երեք օր առաջ են իմացել, կամ՝ նախագահական ընտրություններից հետո հնարավոր է նոր կոալիցիոն հուշագիր ստորագրվի, շատ ավելի ընդլայնված մասնակիցներով, եւ իհարկե, այնտեղ լինելու է նաեւ ԲՀԿ-ն: «Է, քուրս, դրանք բոլորն էլ նույն խմորից են ու ոչ մի կապ չունեն ժողովրդի խմորի հետ», քաղաքական թեմայով իր դատողություններն այսպես ավարտեց ինձ տեղ հասցրած տաքսու վարորդը՝ ամփոփելով իր այն խոսքը, թե ինչ կատարվում է վերեւներում, ներքեւինների հետ ոչ մի կապ չունի, ներքեւինները կպած են իրենց սարի չափ հոգսին, ու էդ թագավորական խոսակցությունները մենակ վերեւներն ու նրանց ձեռքի ջնջոց լրատվամիջոցներն են տանում ամեն օր:

Տես էջ 3

# Հույն Ուղղափառ եկեղեցին Հռոմի պապի դեմ

## *Պատճառը քաղաքացիների «չիպավորման» վերաբերյալ Վատիկանի անտարբերությունն է*

**Ուսումնասիրելով, թե ի՞նչ ծածկագրի տակ են էլեկտրոնային համակարգում պահվում մարդու անձնական տվյալները՝ Հույն ուղղափառ եկեղեցին եկել է եզրահանգման, որ այդ ծածկագիրը սատանայի թիվն է՝ 666-ը: «Անընդունելի է, որ քրիստոնյայի անձնական տվյալները պահվեն 666 թվի տակ», հայտարարում են Հույն ուղղափառ եկեղեցուց: Ընդ որում՝ եկեղեցու պատրիարքարանին հատկապես վրդովեցնում է Կաթոլիկ եկեղեցու ընդգծված անտարբերությունը, ինչը Հույն ուղղափառ եկեղեցին որակում է որպես «Քրիստոսի, Ավետարանի դավաճանություն եւ հակաքրիստոսին ենթարկվելու ապացույց»: «Մարդկության համար այս պատմական ժամանակահատվածում Վատիկանը լռում է եւ աչք է փակում երկինք հասնող հանցագործության վրա, նա ոչինչ չի անում մարդու ինքնաոչնչացման դեմ: Լռում է քրիստոնեության էությունը խեղաթյուրող գենդեր-գեյ իդեոլոգիայի տարածման եւ մանուկների հանդեպ տեղի ունեցող հանցագործությունների առումով, մինչդեռ սա հանցագործություն է երեխաների դեմ, սա հանցագործություն է մարդկության դեմ»:**

**Հույն ուղղափառ եկեղեցին այնուհետեւ ընդգծում է, որ այս բոլոր հանցագործությունները, ինչպես նաեւ մարդկանց «չիպավորումը», առաջ են մղվում ԱՄՆ նախագահ Օբամայի կողմից, ու այս համապատկերում՝ «Բենեդիկտոս 16-րդը հրապարակավ նրան պատժի ենթարկելու փոխարեն, հակառակը, շնորհավորում է վերընտրվելու կապակցությամբ»:**

**Հիշեցնենք, որ ԱՄՆ-ում քաղաքացիների ամբողջական «չիպավորումը» նախատեսված է ավարտին հասցնել մինչը 2013-ի ապրիլի 23-ը. «Այս կապակցությամբ, ինչպես նաեւ հարցի առնչությամբ Վատիկանի հանցավոր լռության, փաստորեն չիպավորումն ընդունելու հիմքով՝ Հույն ուղղափառ եկեղեցին, Աստծո խոսքի ու առաքելական-քրիստոնեական ավանդույթներից ելնելով՝ հայտարարում է, որ Վատիկանը հանդես է եկել Քրիստոսի ու նրա Ավետարանի դավաճանությամբ: Այս Վատիկանը բազմաթիվ խաբված կաթոլիկների տանում է դեպի կրակե ծովում հավերժ մահը»:**

**Հույն ուղղափառ եղեկեցին պաշտոնական նամակով արդեն իսկ հարցի առնչությամբ դիմել է ԱՄՆ Կոնգրեսին ու նահանգապետներին, աշխարհի մի շարք պետությունների ղեկավարներին, Եվրախորհրդարանի պատգամավորներին, քրիստոնեական եկեղեցիներին եւ տարբեր ԶԼՄ-ներին:** **Հ. Ա.**

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Ալբերտ Իսոյան. «Գոյական գրականություն»: Գրական դիմանկար՝ Հրանտ Մաթեւոսյանի մահվան 10-ամյակի կապակցությամբ:**

**Թորոս Թորանյանի հալեպյան օրերի ժամանակագրության շարունակությունը:**

**Դեկտեմբերյան առաջին շաբաթվա մանսուրյանական օրերի ներշնչանքով. Աննա Արեւշատյանի հայացքը Տիգրան Մանսուրյանի երաժշտությանը:**

**Եգիպտահայ լուսանկարիչ Վան Լեոյի կյանքն ու գործունեությունը՝ Հակոբ Ծուլիկյանի ներկայացմամբ:**

**Հիշողություններ ոչ վաղ անցյալից: Սուսաննա Գաբրիելյանը Հովհաննես Թաքուկյանի մտապատկերում՝ որպես սեր, ժպիտ ու կախարդանք:**

**Կանադայում վերջերս տպագրված Արտո Չաքմաքչյանի «CROIX ET FICTIONS» ալբոմի առիթով արձանագործի հետ երեւանյան մեր հանդիպման տպավորությունները:** **Ս. Բ.**

# Զորակոչն ու «Բինգո» երեւույթը

Պաշտպանության նախարարությունից տեղեկացնում են, որ աշնանային զորակոչի մեկնարկին պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հստակ պահանջ է առաջադրել բոլոր պատասխանատուներին՝ խստագույնս պահպանել օրինականության եւ արդարության սկզբունքները զորակոչի գործընթացում: Նախարարությունից հավաստիացնում են, որ հետեւողական քայլեր են արվում զորակոչից զորակոչ բացասական երեւույթները չեզոքացնելու, անարդարության, հովանավորչության ու կաշառքի սողանցքերը փակելու, շահադիտական նկրտումներից գործընթացը զերծ պահելու ուղղությամբ:

Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը հավաստիացնում է, որ ձեռնարկված միջոցառումներն արդյունավետ են եւ հասարակության շրջանում արժանացել են դրական ընկալման:

«Սակայն կան բախտախնդիրներ, ովքեր հանդիպելով փակ դռների՝ «գործ դասավորելու» սին խոստումներ են տալիս մարդկանց՝ խաղադրույք կատարելով պատահականության վրա, եւ եթե «բախտը ժպտում է», փոխհատուցում են շորթում իրենց չարած գործի համար: Ահա թե ինչու այս երեւույթը կնքվել է «Բինգո» բնորոշ անունով: «Բինգո» մոլախտը, լինի համակարգի ներսում, թե նրանից դուրս, իրականում հարցեր լուծելու ոչ մի լծակ չունի, այլ պարզապես սնվում է զարտուղի ճանապարհներ փնտրող մտայնությունից, ինչը, ցավոք, դեռեւս կաղապարում է շատերի գիտակցությունը», երեկ հայտարարել է Հասարակական խորհուրդը՝ զգուշացնելով խաբեբաների ծուղակն ընկնելու վտանգի վերաբերյալ եւ խորհուրդ տալով չհավատալ խոստումներին: Հ. Հ.

# Խոզի լավ տեղերը կթանկանա՞ն

## *.Մասնագետը խորհուրդ է տալիս խոզի ազդրամսի փոխարեն ընտրել ոչխարինը*

Անասնաբուծության եւ անասնաբուժության վարչության պետ **Աշոտ Հովհաննիսյանը** տեղեկացնում է, որ բացառությամբ խոզի ազդրամսի, մսի մյուս տեսակները Նոր տարվա շեմին չեն թանկանալու:

Խոզի ազդրամիսը կամ, ինչպես ընդունված է ասել, խոզի բուդը հնարավոր է, որ թանկանա 8-10 տոկոսով: Աշոտ Հովհաննիսյանը բացատրում է, որ խոզի ազդրամսի պահանջարկն ավելին է, քան առաջարկը, հետեւաբար Ամանորից առաջ գնաճ միգուցե նկատվի:



Երեկվա ասուլիսի ժամանակ Աշոտ Հովհաննիսյանը խորհուրդ տվեց սպառողներին խոզի ազդրամսի փոխարեն ընտրել ոչխարինը, որն ավելի քիչ խոլեստերին է պարունակում, քան խոզի միսը:

Կապված պահանջարկի ավելացման հետ՝ հնարավոր է, որ թանկանա նաեւ կաթնամթերքը, քանի որ դեկտեմբերին կաթնամթերքի պահանջարկը մեծանում է, իսկ իրացումը հատկապես Ամանորից առաջ ավելանում:

Իսկ վերջերս հայտնաբերված սիբիրախտի դեպքերից հետո որքանո՞վ է ապահով այսօր միս գնելը: Աշոտ Հովհաննիսյանը պատասխանում է, որ մորթված մսամթերքն առանց անասնաբույժի թղթի չի փոխանցվում իրացման, ու որեւէ անասնաբույժ սիբիրախտի դեպքերից հետո չի համարձակվի տալ կեղծ փաստաթուղթ, մանավանդ որ քրեական գործի հարուցման նախադեպ արդեն կա: Միս գնելուց առաջ ապահովության համար սպառողը կարող է պահանջել անասնաբույժի տված թուղթը, բայց դարձյալ , մեր կարծիքով, չկա ոչ մի երաշխիք, որ անասնաբույժը չի համարձակվել կեղծել փաստաթուղթը: **Ի. Պ.**

# Աղքատությունից առավել խորանում է սոցիալական անհավասարությունը

## *1,1 մլն մարդ՝ աղքատ, Ջինի գործակիցը՝ բարձր*




Հայաստանի սոցիալական պատկերի եւ հատկապես աղքատության վերաբերյալ մտահոգություն տեղիք տվող ցուցանիշներ են արձանագրվել ազգային վիճակագրական ծառայության իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները: Հետազոտությունը կատարվել է ատարեսկզբին եւ արտացոլում է 2008-2011 թվականներին Հայաստանի բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունները: Անդրադառնանք հիմնական ցուցանիշներին:

Համաձայն կատարված ուսումնասիրության, ամբողջ բնակչության կողմից ճգնաժամային եւ դրան հաջորդած տարիներին սպառումը միջին ամսական նվազել է 6,1 տոկոսով, իսկ աղքատության մակարդակը կազմել է 35 տոկոս, որը փոքր-ինչ ցածր է 2010-ին արձանագրված 35,8 տոկոս ցուցանիշից: Այսինքն, Հայաստանի 3 մլն-ից էլ պակաս բնակչությունից 1,1 մլն մարդ դեռեւս աղքատ է: Դա նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրի միջին ամսական եկամուտը ցածր է 36 հազար դրամից, որը համարվում է աղքատության վերին ընդհանուր գիծը: Տեղեկացնենք, որ ստորին աղքատության գիծը մոտ 30 հազար դրամն է, ինչը բնակչության 7,9 տոկոսի իրական վիճակն է, իսկ աղքատության ծայրահեղ գիծը՝ 21 հազար դրամը, ինչը բնակչության 2,4 տոկոսի վիճակն է: Աղքատության ցուցանիշը ամենացածրը Երեւանում է՝ 27,5 տոկոս, ապա գյուղական բնակավայրերում՝ 34,5 տոկոս, ապա այլ քաղաքներում՝ 43,6 տոկոս:

Զեկույցում նշվում է, եւ դա երեւում է նաեւ ցուցանիշներից, որ աղքատության մակարդակը 2011-ին փոքր-ինչ բարելավվել է 2010-ի համեմատ: Այդուհանդերձ, անհայտ է, որ աղքատության մակարդակը դեռեւս շատ բարձր է: Առավել մտահոգիչ է մեկ այլ ցուցանիշը, որը մեծապես փոխկապակցված է աղքատության բարձր մակարդակի հետ: Դա սպառման եւ եկամուտների անհավասարության՝ այսպես կոչված Ջինի գործակիցն է: Սպառման առումով այն ավելացել է, 2011-ին կազմելով 0,267, 2008-ի՝ 0,242-ի համեմատ, եկամուտների առումով՝ 2011-ին կազմել է 0,371, 2008-ի 0,339-ի համեմատ: Հիշեցնենք, որ այս ցուցանիշը բնութագրում է տվյալ հասարակության մեջ սոցիալական անհավասարության մակարդակը, այսինքն՝ շատ աղքատների եւ շատ հարուստների եկամուտների եւ սպառման տարբերությունները: Եթե ցուցանիշը մոտ է 1-ին, դա նշանակում է, որ անհավասարությունն ավելի խորն է, եթե մոտ է 0-ին՝ ավելի ցածր է:

Ջինի գործակցի արձանագրած ցուցանիշը վկայում է, որ Հայաստանը շարունակում է մնալ եկամուտների խիստ անհավասարաչափ բաշխման երկիր: Այս ցուցանիշը մշտապես ամենախոցելի է եղել մեր երկրի համեմատ անգամ ԱՊՀ երկրների հետ համադրելով: Ավելորդ չէ ասել, որ անգամ այս անհավասարության գործակիցը հեռու է իրական ցուցանիշից, քանի որ ուսումնասիրության մեջ հնարավոր չէ արձանագրել առավել հարուստների իրական եկամուտները: Նրանք պարզապես չեն հայտնում այդ մասին կամ լավագույն դեպքում հայտնում են իրականից զգալիորեն ցածր տվյալներ:

Փաստորեն, 2009-ին արձանագրված 14,1 տոկոս անկման հետեւանքով աճեցին ե՛ւ աղքատությունը, ե՛ւ առանց այն էլ բարձր սոցիալական անհավասարությունը: Չնայած 2010-ին արձանագրված 2,2 տոկոս եւ 2011-ին՝ 4,7 տոկոս տնտեսական աճին եւ անցյալ տարվա ցուցանիշներով աղքատության փոքր-ինչ նվազմանը, սոցիալական անհավասարությունը 2011-ին շարունակել է խորանալ: Հետազոտության մեջ եւս նշվում է, որ թեեւ տնտեսական աճի ժամանակ աղքատները շահում են, բայց ավելի շատ շահում են հարուստները, որոնք ավելի են հարստանում եւ անգամ ճգնաժամի տարիներին շարունակել են հարստանալ: Դա, իհարկե, ունի որոշակի օբյեկտիվ պատճառներ, բայց տնտեսական աճին զուգահեռ անհավասարության խորացումը ընդհանուր առմամբ սուբյեկտիվ իրողություն է եւ վկայում է, որ Հայաստանի իշխանությունները այս ուղղությամբ արդյունավետ քայլեր չեն իրականացնում:

Ինչպես արդեն նշեցինք, աղքատության բարձր մակարդակը անուղղակիորեն կապված է սոցիալական անհավասարության բարձր մակարդակի հետ: Այսինքն, տվյալ դեպքում խոսքը ստվերային տնտեսության բացահայտման եւ հարկման մասին է, որպեսզի ապահովվի եկամուտների ավելի արդարացի վերաբաշխում՝ միաժամանակ նվազեցնելով եւ աղքատության, եւ անհավասարության մակարդակները: Կարծում ենք, որ սա կառավարության սոցիալական քաղաքականության հաջող իրականացման գլխավոր նախապայմաններից մեկն է, եթե ոչ գլխավորը: Այլապես, անհնար է իրականացնել լուրջ սոցիալական ծրագրեր եւ մեծ արդյունավետություն ակնկալել դրանցից:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՌԱՅԼՈՒՄՆԵՐ

# Ի՞նչ կարելի էր անել 34 միլիոն դրամով

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի խորհրդական Արամ Սուքիասյանը հավաստիացնում է, որ ամանորյա միջոցառումների ցանկը հետաքրքրական է լինելու եւ նախորդ տարիների համեմատությամբ՝ բովանդակային առումով պարունակելու է յուրահատուկ ելեւէջներ: Հանրապետության գլխավոր տոնածառի լույսերը կվառվեն դեկտեմբերի 20-ին եւ Երեւանն ամանորյա զունազարդում կստանա: Լույսերը կվառի քաղաքապետը, արարողությունն ու 1,5 ժամ տեւողությամբ համերգը կհեռարձակվի ուղիղ եթերով: Տոնածառը կունենա 32 մետր բարձրություն, զարդարված կլինի ավելի քան 50.000 լուսադիոդային սարքերով եւ 4,500 խաղալիքներով: Փողոցի մայթերը, փողոցներն ու սիզամարգերը նույնպես զարդարված կլինեն լուսադիոդային տարբեր կենդանիներով, ծառերով, շատրվաններով, դեկորատիվ մոմերով եւ լուսավորված տնակներով:

Անակնկալներից մեկն էլ այն է, որ Հանրապետության հրապարակում լույսերի շատրվան կտեղադրվի, որը նորամուծություն է եւ կարծես թե թանկ հաճույք: Քաղաքի երկու հրապարակներում՝ Հանրապետության եւ Ազատության, կտեղադրվեն բեմահարթակներ, որտեղ դեկտեմբերի 22-ից մինչեւ հունվարի 13-ը կկազմակերպվեն համերգներ, միջոցառումներ: Դեկտեմբերի 22-ին եւ 31-ին կկազմակերպվի շքեղ հրավառություն, ամանորյա գիշերը երեկոյան ժամը 10-ից մինչեւ ժամը 2-ը հրապարակում կլինեն էստրադային աստղերը:

Հունվարի 5-ին Ազատության հրապարակը կտրամադրվի մանուկներին եւ այնտեղ կկազմակերպվեն թատերական ներկայացումներ ու համերգային ծրագրեր բացառապես մանուկների համար:

Հունվարի 6-ին կտոնենք Սուրբ Ծնունդն ու ծրագրում գերակշռող կլինեն ազգային եւ հոգեւոր նշանակության երգերն ու ներկայացումները:

Հունվարի 13-ին Հանրապետության հրապարակում տեղի կունենա գալա- համերգ՝ կներկայացվեն տարբեր ոճերի լավագույն ներկայացումներն ու համերգային կատարումները:

Մայրաքաղաքի 12 վարչական շրջաններում նույնպես կլինեն տոնական ծրագրեր, բակային համայնքներում կտեղադրվեն տոնածառեր: Մայրաքաղաքի տոնական տեսքի եւ անցկացվող մշակութային ծրագրերի համար համայնքային բյուջեից կտրամադրվի 34 միլիոն դրամ: 20 միլիոն դրամը կհատկացվի տոնածառի զարդարմանն ու լուսավորությանը, իսկ 14 միլիոնը՝ մշակութային ծրագրերին:

Սրան զուգահեռ տոնական միջոցառումների կազմակերպման համար գումարներ են տրամադրել նաեւ բարերարները, սակայն գումարն ու բարերարների անունները չեն հրապարակվում:

Ինչեւէ, քաղաքապետարանում հավաստիացնում են, որ ցանկանում են պարգեւել տոն բոլորին, իսկ արդյոք այդ տոնն ու շքեղությունը հասանելի կլինե՞ն բոլորին: Վստահաբար՝ ոչ: Վերջին տվյալներով մայրաքաղաքի բնակչության 27.5 տոկոսն աղքատ է, այսինքն՝ ընտանիքի մեկ բնակչի ամսական եկամուտը չի գերազանցում 36.000 դրամը:

Մեղադրել քաղաքապետարանին նման նախաձեռնությունների համար՝ իհարկե չի կարելի, սակայն նման պարագայում չհիմնավորված ճոխությունն ու շքեղությունն էլ արդարացված չեն:

*Տես էջ 8*

# Ուղղում

«**Ազգի**» 13.12.2012-ի համարում Զորի Բալայանի հեղինակած «Կարինե Ղազինյանի երջանկության արցունքները» հոդվածում առկա են մի շարք անճշտություններ, գրում է Գերմանիայի մեր թղթակիցը: Հուշագրության մեջ մի քանի անգամ կրկնվում է հայր Քերովբե անունը, պետք է լինի՝ Սերովբե, խոսքը Սերովբե վարդապետ Իսախանյանի մասին է: Այնուհետ կարդում ենք. «Կարինեն աշխատում էր որպես Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար, իսկ 1994-ից Հայաստանի առաջին դեսպանն էր Ռումինիայում»: Խոսքը Գեորգի Ղազինյանի մասին է, Կարինե Ղազինյանը փոխարտգործնախարարի պաշտոնում աշխատել է ավելի ուշ՝ 2009-2011 թվականներին: «2003 թվականին տեղափոխվեց Գերմանիա», պետք է լինի 2001-ին՝ Կարինե Ղազինյանը ԳԴՀ-ում ՀՀ դեսպանն է եղել 2001-2009 թվականներին: Հուշագրության մեջ սխալ է ներկայացված նաեւ դեսպանատան այդ տարիների աշխատակից Աշոտ Սմբատյանի ազգանունը՝ Սիսարյան ձեւը ճիշտ չէ:

# Նոր խոսք նոր ամսագրով



**Լույս է տեսել գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական «Անդին» ամսագրի նախահամարը, որտեղ համառոտ ամփոփված է ամսագրի առաջիկա երեք համարների բովանդակությունը, իսկ «Անդինի» առաջին համարը լույս կտեսնի 2013-ի հունվարին:**

**Նախահամարի հրատարակման առիթով երեկ լրագրողների հետ հանդիպեց ամսագրի գլխավոր խմբագիրն ու խմբագրական խորհրդի նախագահը՝ գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը:**

Գլխավոր խմբագիրը վստահ է, որ ամսագիրը հետաքրքրություն կառաջացնի նաեւ երիտասարդության շրջանում: Մերուժան Տեր-Գուլանյանը համաձայն չէ այն կարծիքին, թե նոր սերունդը կամ, ինչպես ինքն է ասում, անկախության սերունդը, կարդալ չի սիրում եւ չի էլ կարդում: Ըստ նրա՝ երիտասարդությանը պարզապես պետք է մատուցել հետաքրքրական նյութեր, իսկ «Անդին» ամսագրում զետեղված նյութերի մեջ, Մերուժան Տեր-Գուլանյանի փոխանցմամբ, երիտասարդները հաստատ կգտնեն իրենց հետաքրքրող հոդվածներ:

Թե ինչու՞ է կոչվում անդին՝ պատասխանը Մերուժան Տեր-Գուլանյանը կապում է Ե. Չարենցի «Կարմիր գծից անդին» արտահայտության հետ եւ հավելում. որ իր անկախությամբ Հայաստանը կարմիր գծի սահմանը տարիներ առաջ է անցել եւ վաղուց ժամանակն է վերահիմնավորելու ժողովրդի ստեղծած արժեքները նոր սերնդի համար, հետեւաբար իր հրապարակումներով «Անդին» ամսագիրը ծառայելու է նաեւ այդ նպատակին:

Մերուժան Տեր-Գուլանյանը տեղեկացնում է, որ ամսագրի դռները բաց են բոլոր հեղինակների առաջ՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից. ամսագրի համար կարեւոր է, որ հոդվածը լինի օգտավետ ու հետաքրքրական:

«Անդինը» լույս կտեսնի ամեն ամիս՝ տարեկան 12 համար, որոնք գրախանութներում ու կրպակներում չեն վաճառվելու, այլ վաճառվելու են միայն բաժանորդագրությամբ: Դպրոցների ու բանակի համար բաժանորդագրման գինը տարեկան 12 հազար դրամ է, իսկ մյուս բոլորի համար՝ 24 հազար դրամ: Ամսագիրն ունենալու է 5000 տպաքանակ, իսկ թեմաները լինելու են բազմազան, ամսագիրը չի սահմանափակվելու միայն հայաստանյան թեմաների լուսաբանմամբ, այլեւ ընդգրկելու է անդրադարձներ ամբողջ աշխարհից:

«Անդինի» խմբագրական խորհրդում ընդգրկված են Աշոտ Մելքոնյանը, Լեւոն Սարգսյանը, Հարություն Հարությունյանը, Սեյրան Օհանյանը եւ ուրիշներ: Ի դեպ, պաշտպանության նախարարի՝ խմբագրական խորհրդում ընդգրկվելու վերաբերյալ Մերուժան Տեր-Գուլանյանը նշում է, որ դրանով պայմանավորված ամսագիրն անընդհատ անդրադառնալու է նաեւ հայկական բանակին:

Գլխավոր խմբագիրը հավաստիացնում է ընթերցողներին, որ ամսագրերի այսօրվա բազմազանության մեջ «Անդինը» կտարբերվի մյուսներից:

Հուսով ենք, որ նորաստեղծ ամսագիրն իր անաչառությամբ ու նոր խոսքով իսկապես կդառնա նորույթ մեր ամսագրային մամուլում եւ կունենա երկար կյանք ի տարբերություն մեր օրերում արագ բացվող ու արագ էլ փակվող ամսագրերի: «Անդինին» մաղթում ենք բարի երթ:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# Վարչապետ Տիգրան Սարգսեանի այցը Բոստոն

Գերմանիա եւ Կալիֆոռնիա կատարած յաջող այցելութիւններէն ետք, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան իր շքախումբին հետ չորեքշաբթի, դեկտեմբեր 12-ի առաւօտեան ժամանեց Բոստոնի միջազգային օդակայանը եւ առաջնորդուեցաւ Քէյմբրիճ քաղաքի Կիլիսերեան ընտանիքին պատկանող Sheraton Commander հիւրանոցը:



Առաւօտեան ժամը 9.45-ին, վարչապետն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Բոստոնի Նորաբաց Հայկական ժառանգութեան զբօսայգին, ուր այս տարուան մայիս 24-ին նախագահութեամբ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի եւ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի բացումը կատարուեցաւ Եղեռնի յուշարձանին: Զբօսայգին հայ գաղութին նուէրն է Մեսեչուսեթս նահանգի բնակիչներուն, որոնք իրենց օժանդակութիւնը տուած են այն հայորդիներուն, որոնք Եղեռնէն յետոյ հաստատուած են այս ափերուն վրայ: Վարչապետ Սարգսեան ծաղկեփունջ զետեղեց յուշարձանին առջեւ եւ իր յարգանքի տուրքը մատուցեց խոնարհելով անոր առաջ: Հայկական ժառանգութեան զբօսայգիի միութեան ատենապետ Ջիմի Գալուստեան զբօսայգիի կառուցման հակիրճ պատմականը տուաւ վարչապետին եւ բացատրեց արձանին իմաստը, որ տարին անգամ մը, ապրիլ 24-ին, կը փոխակերպուի եւ կու տայ նոր խուրհուրդ մը մեր Եղեռնի պատմութեան: Զբօսայգիի ճարտարապետն է Դոնալդ Թելալեան եւ արձանի շինարարը եւ նուիրատուն Աուրելեան Մարտիրոս ընտանիքը, երկուքն ալ գաղութի նուիրեալ անդամներ: Գաղութին կողմէ ներկայ էին նաեւ Վարդանանց ասպետներու աւագ սպարապետ Նիկողոս Աքընըզեան եւ Թէքէեան մշակութային միութեան վարիչ-քարտուղար Գէորգ Մարաշլեան:

Այնուհետեւ վարչապետը ուղղուեցաւ Մեսեչուսեթս նահանգի նահանգապետարան, ուր հանդիպում ունեցաւ հայասէր նահանգապետ Դուվալ Փաթրիքի հետ: Պրն Փաթրիք իր երախտագիտութիւնը փոխանցեց հայ գաղութին նուիրած զբօսայգիին համար եւ իր համոզումը յայտնեց, թէ ամբողջ մարդկութիւնը շուտով պիտի գիտակցի հայ ժողովուրդին դէմ պատահած Եղեռնի ահաւորութեան եւ պիտի ճանչնայ հայ ժողովուրդի արդար պահանջները: Վարչապետ Սարգսեան իր կարգին շնորհակալութիւն յայտնեց նահանգապետին, հայ գաղութին ցուցաբերած օժանդակութեան համար եւ հակիրճ կերպով անդրադարձաւ Հայաստանի տնտեսական այժմու վիճակին: Վերջաւորութեան նահանգապետ Փաթրիք Մեսեչուսեթսի մեդալն ու պատկերազարդ պատմական գիրքը նուիրեց վարչապետին:

Կէսօրուան ժամը 12-ին, վարչապետը ուղղուեցաւ Հարվըրդ համալսարան, ուրկէ Ջոն Քենեդի կառավարական բաժանմունքի Բելֆեր կեդրոնին մէջ, համալսարանի տնօրէններուն ներկայացուց Հայաստանի տնտեսական եւ քաղաքական այժմու վիճակը՝ «Խօսակցութիւն Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ» խորագրով կազմակերպուած հանդիպման ընթացքին: Վարչապետի պատուիրակութեան անդամներէն բացի, հայ գաղութէն միակ հրաւիրեալներն էին ՌԱԿ-ի պաշտօնաթերթ «Արմինիըն միրըր-սփեքթէյթըր» թերթի խմբագիր Ալին Գրիգորեան եւ օգնական խմբագիր Գաբրիէլա Գեյջ:

Վարչապետը կէսօրէ ետք մեկնեցաւ Էմ Այ Թի համալսարան, ուր հանդիպում ունեցաւ համալսարանի հայազգի ուսանողութեան հետ, ինչպէս նաեւ տնտեսագիտութեան բաժնի պետ Տարօն Աճեմօղլուի հետ:

Պրն Սարգսեան Բոստոնի իր այցը ամփոփեց հանդիպում ունենալով ՀԲԸՄիութեան կեդրոնական վարչութեան նորընտիր անդամ եւ գաղութի երիտասարդ ղեկավարներէն Նուբար Աֆեյեանի հետ, որուն հանձնեց ՀՀ նախագահական շնորհած շքանշանը:

Սեփ. թղթ.

# Ո՞վ է Վալերի Դեմենտեւը, որտե՞ղ եւ ինչպե՞ս է զոհվել

«Իլհամպրոպը», պարզվում է, ունի հստակ օրացույց, որ «քարոզչական պատերազմում» օգտագործվում է, եթե հայկական կողմին «մեղադրելու» ամենաչնչին իսկ առիթ է ծագում: Խոսքը հատկապես վերաբերում է ղարաբաղյան հակամարտության ժամանակ զոհված ռուսաստանցիներին: Նման դեպքերում ադրբեջանական քարոզչամեքենան «յուրահատուկ արտացավություն է ցուցաբերում»:

Բաց չի թողնվել նաեւ ռուսաստանցի լրագրող Վալերի Դեմենտեւի 45-ամյակի առիթը: Դեմենտեւը, ըստ www.memorium.ru կայքի տվյալների, ծնվել է 1967 թ. դեկտեմբերի 12-ին, ՌԴ Պերմ քաղաքում: 24 տարեկանում «ընտրվել է Պերմի ԼԿԵՄ մարզկոմի «Մոլոդայա գվարդիա» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր»: Նույն տարվա ամռանը «ծառայողական գործուղման է մեկնել Լեռնային Ղարաբաղ»:

Այժմ տեսնենք, թե փաստն ինչպես է ներկայացրել vesti.az-ը: «Իմանալով, որ ՌԽՖՍՀ-ից Լեռնային Ղարաբաղ է եկել հայկական լոբբին չծախված լրագրող, հայերը որոշել են նրա դեմ ծուղակ լարել»,- գրել է ադրբեջանական լրատվամիջոցը: Հարց է առաջանում, որտեղի՞ց «հայերը կարող էին իմանալ», որ ՌԽՖՍՀ-ից Ադրբեջան է եկել 24-ամյա Դեմենտեւը եւ ինչպե՞ս պիտի նրա դեմ «ծուղակ լարեին»:

Այս մասին vesti.az-ը ոչինչ չի ասում: Փոխարենը գրում է. «Հուլիսի 31-ին (1991-ի) խորհրդային զինվորների եւ հայ «գրոհայինների» (չակերտները մերն են - Վ. Ա.) մարտ է սկսվում, որին մասնակցելով (՞ - Վ. Ա.) Վալերին ծանր վիրավորվում է դիպուկահարի կրակոցով: Չնայած ցուցաբերված բժշկական օգնությանը, Վ. Դեմենտեւը 1991 թ. օգոստոսի 13-ին մահանում է Բաքվի հոսպիտալում՝ այդպես էլ գիտակցության չգալով»:

«21 տարի առաջ հայերը սպանեցին Վալերի Դեմենտեւին»,- այս խորագրի տակ է vesti.az-ը «թարմացրել» մարդկանց հիշողությունը: Իսկ ահա թե ինչ է ասել Պերմի լրագրողական կազմակերպության ղեկավար Մոսեեւը Վալերի Դեմենտեւի մահվան 15-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառմանը: «Վալերին խորհրդային զորքերի հետ շարժվում էր դեպի Լեռնային Ղարաբաղ, ականի պայթյունից Վալերին ծանր վիրավորվում է, նրան դուրս բերել (փրկել) չի հաջողվում» (տես՝ **http://perm.rfn.ru/rnews.html?id=25905**):

Ինչպես տեսնում ենք, Դեմենտեւը զոհվել է ոչ թե Լեռնային Ղարաբաղում «հայ գրոհայինների եւ խորհրդային զինվորների միջեւ սկսված մարտի ընթացքում դիպուկահարի կրակոցով ստացած վերքից», այլ գտնվել է խորհրդային զորքերի հետ եւ շարժվելիս է եղել «դեպի Լեռնային Ղարաբաղ», իսկ վիրավորվել՝ «ականի պայթյունից»: Հետեւաբար, նրա դեմ ծուղակ լարել են ոչ թե «հայերը», այլ՝ ադրբեջանցիները: Այդ է վկայում պերմցի լրագրող Մոսեեւի արտահայտությունը, որ «զորքերը շարժվում էին դեպի Լեռնային Ղարաբաղ»: Այսինքն, միջադեպը տեղի է ունեցել ավելի վաղ, քան զորքերը կհասնեին Լեռնային Ղարաբաղ:

Ավելի հստակ ասած՝ 1991 թ. հուլիսի 31-ին Վալերի Դեմենտեւը մահացու վիրավորվել է Ադրբեջանի՝ ԼՂ-ին հարակից շրջաններից մեկում եւ, գիտակցության չգալով, օգոստոսի 13-ին մահացել Բաքվի զինվորական հոսպիտալում: Եւ «իլհամպրոպը» 21 տարի անց զուր ջանքեր է գործադրում՝ 24-ամյա ռուսաստանցի լրագրողի ողբերգական մահվան պատասխանատվությունը «հայկական կողմի վրա բարդելու»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

# «Գնացեք հեռու, ես չկամ»

1-ին էջից

Ասեկոսեները՝ ասեկոսեներ, բայց որ ողջ քաղաքական դաշտն ասես կորցրած լինի հենման կետը, սա՝ հաստատ, քանի որ նախագահական ընտրությունները քթի տակ, մարդիկ չգիտեն ինչ որոշեն, ում կողմը նայեն, ԲՀԿ որոշումից հետո փորձում էին ինքնուրույն առանցքավորել իրենց քաղաքական առօրյան: Այժմ բոլորը խոսում են այն մասին, թե ով ինչպես պետք է աշխատի, որ իր կողմը գրավի ծառուկյանական կես միլիոնանոց էլեկտորատը՝ ասել է թե բաժանում են անտեր մնացած ժառանգությունը: Ասում են այն մասին, թե պետք է վերստին իմաստավորել քաղաքական դաշտը, զրոյից կայացնել, ապաօլիգարխացնել, նորոգել եւ այլն:

Օրինակ՝ ՀԴԿ-ից **Արամ Սարգսյանը** երեկ կայքերից մեկին ասել էր, թե ամենակարեւորն այն է, ինչ հաջորդելու է ընտրություններին. «Դա նախագահի երկրորդ ժամկետի սկիզբն է, այսպիսով, անհրաժեշտ է լրջորեն պատրաստվել հաջորդ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին»: Ընդհանուր առմամբ՝ քաղաքականները փորձում են հարմարվել նոր իրավիճակին:

Ընդհանրացնենք մեր ասելիքը՝ երեկվա մի քաղաքական բանավեճի ընդհանուր տրամադրությունը փոխանցելով: Երեկ մի ասուլիսատեղում (քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում) եղանք, որտեղ բանավեճի էին մի խումբ քաղաքական գործիչներ եւ հասկացանք, որ, այո, մեր քաղաքական դաշտի ներկայացուցիչները փորձում են գոյացած ծանծաղուտից դուրս լողալ: «Ժառանգությունից» **Ստյոպա Սաֆարյանը** պատկերավոր նկարագրում էր տեղի ունեցածը, թե ամիսներ ՀՀԿ-ն ընկել էր ԲՀԿ-ի հետեւից՝ իրեն սատարելու պահանջով, նույն բանն անում էր ՀԱԿ-ը, եւ Ռոբերտ Քոչարյանը, ու Ծառուկյանի արածն այն էր, որ ասաց. «Գնացեք, ես չկամ»: Նա աննախադեպ անվանեց ԲՀԿ-ի որոշումը ոչ մեկին չսատարելու մասին, սա վատ նշան համարելով առհասարակ մեր քաղաքական իրականության համար, քանի որ կես միլիոն մարդու այդպիսով կոչ է արվում մնալ տանը եւ չգնալ ընտրությունների:

ՀՅԴ-ից **Արսեն Համբարձումյանը** նշելով, որ հարգում են ԲՀԿ-ի կայացրած որոշումը՝ կրկին խոսեց միասնական քաղաքական օրակարգ ձեւավորելուց, իսկ բուն թեկնածուի մասին, ըստ նրա, խոսք կգնա երկրորդ փուլում, ու միայն միասնական թեկնածուի պարագայում է մրցակցային ընտրություններ ապահովել: Ե՞րբ է այդ երկրորդ փուլը, չհամբերեցինք անհամբերներս. սահմանված կարգով նախընտրական շտաբեր կձեւավորվեն, պաշտոնական առաջադրումները կսկսվեն՝ այն ժամանակ: Քիչ մնաց, հա: Ա. Համբարձումյանը անհամբեր ճշտողների համար պարզաբանեց. «Ընտրությունն օլիմպիադա չէ, մենք մեր օրակարգն ենք ուզում իրականացնել նախագահական ընտրությունների միջոցով», հավելելով, թե օրակարգի իրականացմանը հետամուտ են լինելու անկախ նրանից՝ իշխանությո՞ւն են լինելու, թե ընդդիմություն: Նա քաղաքական դաշտը չկայացած համարեց՝ անձնակենտրոն ուժեր են գործում քաղաքական դաշտում, միանձնյա որոշումներ են կայացվում, այս բոլորը պետք է փոխվի:

«Ոչ մեկի հետեւից Հանրապետականը չի ընկել, գուցե «Ժառանգությունն» է ընկած «Ազատ դեմոկրատների» հետեւից», ի պատասխան Ստյոպա Սաֆարյանի ՝ ասաց ՀՀԿ-ական **Հովհաննես Սահակյանը**՝ նկատի ունենալով այն, որ «Ժառանգության» լիդերը խնդիր ունի իր կողմից խորհրդարան բերած ուժի պաշտպանությանը նախագահական ընտրություններին: Իսկ ՀՀԿ-ի հիմնական նպատակ նշեց նորմալ ընտրությունների անցկացումը: Եվ մի քաղաքական ուժի չմասնակցության պարագայում՝ մյուս քաղաքական ուժերի հիմնական անելիք որպես տեսավ այն ջանքերը, որոնք պետք է գործադրել ազատ մնացած ԲՀԿ-ի էլեկտորատն իրենց կողմը գրավելու համար:

Ահա այս էր ընդհանուր պատկերը երեկվա քաղաքական բանավեճի երեւի բոլոր հնարավոր կարծիքարտահայտման վայրերում:

Պակասում էր **Վարդան Օսկանյանի** տեսակետը, դա էլ եղավ ֆեյսբուքում, ուր Օսկանյանը գրել է. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ փետրվարին կայանալիք նախագահական ընտրություններին թեկնածու չառաջադրելու եւ որեւէ թեկնածուի չպաշտպանելու որոշումը հեշտ չի կայացվել: Քաղխորհրդում, բնականաբար, եղել են տարբեր կարծիքներ:

Ամիսներ առաջ ես հրապարակային էի դարձրել իմ կարծիքը, որ ԲՀԿ-ն նախագահական ընտրություններին պետք է մասնակցի սեփական թեկնածուով՝ հաշվի առնելով կուսակցության կշիռը, վարկանիշը, այլընտրանք լինելու, ինչպես նաեւ միասնական թեկնածուի շուրջ համաձայնության գալու հնարավորությունները:

ԲՀԿ քաղխորհուրդը, հաշվի առնելով ներքաղաքական դաշտում ստեղծված կոնյունկտուրան, միասնական թեկնածուի հնարավորության շուրջ առաջացած բարդությունները եւ Գագիկ Ծառուկյանի՝ իր թեկնածությունը չառաջադրելու որոշումը, նպատակահարմար գտավ նախագահական ընտրություններին հանդես չգալ սեփական թեկնածուով եւ չսատարել որեւէ այլ թեկնածուի:

Չնայած ես այլ կերպ էի պատկերացնում մեր քայլերն ու հետագա պայքարը, այդուհանդերձ հարգում եմ ընդունված որոշումը»: Սակայն Օսկանյանը չի ասել, թե ինչպես է արտահայտվելու այդ հարգանքը, ինչ գործողությամբ:

Քաղաքական դաշտի իրադարձություններին ակնդետ հետեւող Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի ղեկավար Վիկտոր Սողոմոնյանը եւս երկրորդ նախագահի էջում հանգստացրել է Քոչարյանի ուրվականից վախեցողներին, թե չի կարծում, որ Քոչարյանը կմասնակցի 2013 թվականի նախագահական ընտրություններին, քանի որ երբեք նրանից չի լսել առաջադրվելու ցանկության մասին: Բայց եւ՝«անպայման կտա իր գնահատականները ընթացիկ քաղաքական իրավիճակի վերաբերյալ». ապագայում նա ծրագրել էր արձագանքել առաջարկներից մեկին եւ հարցազրույց տալ: Պուտինի հետ էլ հանդիպում ծրագրված չէ, թեեւ լրատվամիջոցները գրել են այդ մասին (Քոչարյանն այժմ Մոսկվայում է ԱՖԿ Սիստեմայի տնօրենների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով միայն):

# Եվրասիական քննարկումներ Բելառուսի մայրաքաղաքում.

## *Թեմաներ 2013 թվականի համար*

Դեկտեմբերի 10 եւ 11-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում ռուսաստանյան «ՌԻԱ Նովոստի» գործակալության նախաձեռնությամբ հրավիրվեց «Եվրոպական եւ ասիական լրատվամիջոցների ֆորումը», որին մասնակցում էին ԱՊՀ եւ Բալթյան 14 երկրների ավելի քան 200 լրագրողներ, վերլուծաբաններ, քաղաքագետներ, հասարակական գործիչներ: Ֆորումին մասնակցում էր նաեւ 13 մարդուց բաղկացած հայաստանյան պատվիրակությունը: ՖԵԱՄ-ը յոթերորդն էր պատմության մեջ եւ առաջինը, որտեղ քննարկվում էին եվրասիական ինտեգրման հեռանկարները: Լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում անցած այս խոշոր միջոցառումն ամփոփեց 2012 թվականին ընթացած եվրասիական ինտեգրման թեմային նվիրված մեծ քննարկումների շարքը, եւ արդեն կարելի է որոշակի հստակություն տալ ձեւավորվող պատկերացումներին եւ գծագրել այն ուղղությունները, որոնցով ընթանալու են հաջորդ տարվա քննարկումները:

### Հոգեւոր բաղադրիչը քաղաքական տեսլականում

Հիմա շատ է ընդունված ասել, որ հետխորհրդային տարածքում ինտեգրման գործընթացների հիմքը ժողովուրդների ցանկությունն է համատեղելու իրենց տնտեսական, քաղաքական, գիտամշակութային, անվտանգային, հումանիտար ապագան համատեղ անցյալի դրական գործոնների հիման վրա: Հիմա արդեն շատ չեն խոսում այն մասին, որ Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՊՀ ստեղծումը քաղաքակիրթ ապահարզանի մի փորձ էր եւ նպատակ ուներ հետխորհրդային տարածքի նորանկախ պետությունները բաժանել իրարից հնարավորինս անցավ եւ առանց աղետների: Նախկին ԽՍՀՄ տարածքում 21 տարի անց ապրող բոլոր ժողովուրդների համար իրենց նորանկախ պետականությունները անվիճելի բարձրագույն արժեք են: Նոր աշխարհակարգում իրենց արժանի տեղը փնտրել ցանկացող մեր պետությունները իրենց տարբեր հնարավորությունների, բնական, աշխարհաքաղաքական տարբեր պայմանների բերումով տարբեր հաջողությամբ են լուծել եւ լուծում իրենց առջեւ կանգնած խնդիրները: Վերջին տարիներին Ռուսաստանը արձանագրում է տնտեսական հաջողություններ եւ աշխարհում արդեն խոսում են, որ նրա զարգացման հնարավորությունները գալիք տարիներին կարող են էլ ավելի մեծանալ, մանավանդ ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքի հաղթահարումից հետո: ՖԵԱՄ-ում ելույթ ունեցող քաղաքական գործիչները եւ անվանի փորձագետները արձանագրում էին, որ առնվազն յոթ մակարդակները, որոնցում ընթանում է Ռուսաստանի եւ նրա մերձավոր հարեւանների ինտեգրումը, հիմք են տալիս խոսելու ԱՊՀ տարածքում բազմամակարդակ ինտեգրացիոն գործընթացների ծավալման մասին: Դրանցից ամենասերտը Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի միջեւ 2012 թ. հունվարի 1-ից գործող Տնտեսական ընդհանուր տարածքն է, որի հիման վրա 2014 թ. հունվարի 1-ին կձեւավորվի Եվրասիական միությունը: Հետաքրքրությունը ինտեգրացիոն այդ ամենաբարձր մակարդակի նկատմամբ գնալով մեծանում է, եւ դա է պատճառներից մեկը, որ քաղաքական ու փորձագիտական մակարդակներում ուզում են հասկանալ. ի՞նչ տեսք է ստանալու այդ միությունը եւ ընդլայնվելու ինչպիսի՞ միտում է ունենալու: Պատահական չէ, որ ֆորումին ակտիվ մասնակցում էին ոչ միայն այդ երեք երկրների ներկայացուցիչներ, այլ նաեւ Ադրբեջանի, Վրաստանի, նույնիսկ Եվրոմիության անդամ Բալթյան պետությունների բազմամարդ պատվիրակություններ: Այն, որ Խորհրդային Միությունը մեր ընդհանուր անցյալն է, ճիշտ է այնքանով, որ մեր հասարակությունների միջին եւ ավագ սերունդը դեռ կարող է դրական հիշողություններ ունենալ խորհրդային անցյալի առանձին դրսեւորումների մասին: Բայց երիտասարդ եւ մանուկ սերունդներին ընդհանուր խորհրդային անցյալը ծանոթ չէ: Ղազախստանի նախագահը 1994 թ. առաջարկում էր եվրասիական ինտեգրումը ծավալել բացարձակապես պրագմատիկ տնտեսական շահի հիման վրա: Այսօր՝ աշխարհաքաղաքական բարդ պայմաններում պարզ է դառնում, որ առանց մարդկանց հոգեւոր արժեքային համակարգի վրա դրական ներգործություն ունենալու, առանց ժողովուրդներին միատեղելու, նրանց միասին ապագա կերտելուն ուղղված բացատրական, տեղեկատվական գործունեություն ծավալելու եվրասիական ինտեգրման գործընթացը առանձնապես հաջողություն չի ունենա: Եվրասիական միությունն իհարկե կստեղծվի, բայց ինտեգրման գործընթացների հետեւողական ծավալում կարող է եւ չարձանագրվել:

### Ինչպիսի՞ն կլինի Եվրասիական միությունը

Ռուսաստանցի խոշոր տնտեսագետ, պրոֆեսոր Ռուսլան Գրինբերգը հանգամանորեն խոսեց եվրասիական ինտեգրման կոնկրետ ուղղությունների մասին: Տարբեր երկրներից հավաքված մարդիկ հետաքրքրված լսում եւ միասին մտածում էին նրա այն դատողությունների շուրջը, որ ապագա միությունը չի կարող չունենալ միասնական տարադրամ, եւ այդ տարադրամը պետք է լինի ռուսական ռուբլին: Նրա պատճառաբանությունը շատ պարզ էր. Եվրոպական միությունում մտցրին նոր միավոր՝ եվրո, այն պարզ պատճառով, որ ֆրանկո-գերմանական ֆինանսատնտեսական համակարգը գերակշռող հարաբերությունների մեջ էր Եվրոմիության մյուս անդամների ընդհանուր տնտեսության նկատմամբ: Այնինչ Ռուսաստանը հանդիսանալու է ոչ միայն այդ միության առանցքը, այլ նաեւ գերակշռող դերակատարություն է ունենալու ընդհանուր տնտեսական համակարգում: Նա հիշեցրեց, օրինակ, որ ժամանակին սոցիալիստական երկրները միավորող Տնտեսական փոխօգնության խորհրդում գործում էր պայմանական «փոխարկելի ռուբլի» անունը ստացած տարադրամը: Սակայն նա անմիջապես էլ ուղղեց իրեն, բացատրելով, որ այդ կազմակերպության մեջ ոչ թե ընդհանուր շուկա է գործել, այլ ապրանքափոխանակություն: Մեկ ուրիշը հիշեցրեց, որ Ղազախստանի նախագահն առաջարկել է ստեղծել նոր տարադրամ: Բայց այս առաջարկին էլ ռուս տնտեսագետները առայժմ համաձայն չեն այն պարզ պատճառաբանությամբ, որ Ռուսաստանի ֆինանսատնտեսական համակարգն է ապահովելու այդ ընդհանուր տարադրամի կայունությունը: Այս պահին այս փաստարկի թույլ կողմն այն է, որ Ռուսաստանի տնտեսությունը դոլարային տնտեսություն է, հետեւաբար ռուսական ռուբլին կայուն է դոլարի շնորհիվ եւ իր հերթին կայունացնում է դոլարը: Այս միտումները ժամանակի ընթացքում կարող են պարզվել եւ հստականալ, սակայն պարզ է, որ հենց ՖԵԱՄ-ի միջավայրում ծավալելով նման քննարկումներ, նպատակ է հետապնդվում հասարակական շրջանակներում առաջ մղել ապագա եվրասիական կառույցի զանազան կողմերին վերաբերող հարցերի շարքը: Տարբեր բանախոսներ վերլուծում նաեւ քննադատում էին նախօրեին ԱՄՆ պետական քարտուղար տիկին Քլինթոնի այն հայտարարությունը, թե Եվրասիական միության ստեղծումը նպատակ ունի վերակենդանացնել Խորհրդային Միությունը, եւ այդ պատճառով էլ անընդունելի է: Կրկին հիշվեց նախագահ Վլադիմիր Պուտինի հայտնի խոսքը, որ «ով չի ցավում Խորհրդային Միության փլուզման համար՝ նա սիրտ չունի, բայց ով լրջորեն ցանկանում է վերականգնել Խորհրդային Միությունը՝ նա գլուխ չունի»: Հանրային քննարկման հանված հետաքրքրական թեզերից մեկն այն էր, որ մի կողմից Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի, մյուս կողմից, ասենք, Ղրղզստանի եւ Տաջիկստանի տնտեսությունների մեջ այնպիսի տարբերություն կա, որ դեռ պետք է լրջորեն մտածել, թե ինչի՞ դիմաց են այդ վերջին երկուսին ընդունելու Եվրասիական միություն, եթե նման խնդրանք ստացվի: Պարզ է, որ Եվրասիական միության ծավալման պայմաններում անդամ-պետությունները իրենց ինքնիշխանությունից որոշ մաս են փոխանցելու այդ միության վերազգային իշխանական ինստիտուտներին: Այս մասին առանձնապես խոր քննարկումներ չեղան, բայց պարզ է, որ առանց այդ հարցերը քննարկելու եւ լուծելու միություն չի ձեւավորվելու: Հիշեցին նաեւ, որ Եվրոպական միությունը քառասուն տարի ավելի ընթացող ինտեգրման գործընթացով ստացել է իր այժմեական տեսքը: Իսկ պատմաբաններն էլ վկայեցին, որ պատմական գործընթացների ծավալման արագությունը աշխարհում անընդհատ փոխվում է, եւ այսօր ընթացող գործընթացները տեսականորեն կարող են ընթանալ շատ ավելի արագ: Պե՞տք է արդյոք, թե՞ ոչ, արհեստականորեն արագացնել եվրասիական ինտեգրման գործընթացը, ֆորումի մասնակիցների համար նույնպես միանշանակ չէր: Օրինակ, քիչ չէին ինքնուրույն մտածող համարձակ փորձագետ վերլուծաբանները, ովքեր առաջարկում էին հանգիստ ծավալել արդեն ձեւավորվող Եվրասիական միությունը, չշտապել ընդունել նոր անդամներ եւ չվախենալ արտաքին ճնշումներից ավելի խորը բարեփոխումներ իրականացնելու ճանապարհին: Ինչ վերաբերում է պետքարտուղար Քլինթոնի հայտարարությանը, ապա ֆորումի միջանցքներում կատակում էին, որ ԱՄՆ-ն, ինչպես եւ 30 տարի առաջ, այսօր էլ թույլ չի տալու Մեծ Եվրոպայի ստեղծումը Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ: Այս թեմայի ամբողջականությունը ապահովելու համար ասենք, որ նախօրեին, արդեն ֆորումի ավարտից հետո ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ ողջունում է տարածաշրջանային ինտեգրման գործընթացները: Սա նշանակում է, որ ԱՄՆ ռազմավարական վերլուծաբանները համաձայն են ապագայի այն պատկերացմանը, որ աշխարհը զարգանալու է տարածաշրջանային գլոբալ կազմավորումների տեսքով, որոնք կարողանալու են համախմբել անդամ-պետությունների ջանքերը ֆինանսատնտեսական ցնցումների դեմ պայքարում:

### Հարավային Կովկասը եւ եվրասիական ինտեգրումը

Մինսկում Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի պատվիրակների հանդեպ որոշակի հետաքրքրություն կար լուսաբանող լրագրողների շրջանում: Ադրբեջանցի ներկայացուցիչներից մեկն իր հրապարակային ելույթում կողմ էր եվրասիական տարածքում տեղեկատվական ընդհանուր տարածք ունենալուն, մասնավորապես եվրասիական հեռուստաալիք ստեղծելուն: Սակայն նա զգուշորեն նաեւ հավելեց, թե մենք նոր ենք հրաժեշտ տվել խորհրդային անցյալին, նոր ենք իմաստավորում մեր ինքնիշխանությունը եւ եկեք չշտապենք նրա մի մասից հրաժարվել այսքան արագ: Վրաց պատվիրակները հիմնականում ուշադրությամբ լսում էին, եւ նրանց ներկայությունն իսկ ֆորումում գնահատված էր իբրեւ հաջողություն: Մեր պատվիրակության ներկայացուցիչները ակտիվ էին, ներգրավված բոլոր քննարկումներում, եւ նրանց նույնպես լսում էին հետաքրքրությամբ: Բելառուսական պետական լրատվական գործակալությանը տված իմ հարցազրույցում ես ասացի, որ Հայաստանում վերջին ամիսներին որոշակի հետաքրքրություն կա եվրասիական թեմայով քննարկումների հանդեպ, եւ պարզ է, որ տեսանելի հեռանկարում այդ քննարկումները աշխուժանալու են: Ես հիշեցրի, որ Հայաստանը երեք հեռանկար ունի. առաջինը եվրոինտեգրման հեռանկար ծավալումն է, բայց արդեն հասկանալի է, որ մոտակա 15-20 տարիներին Եվրոմիությունը դեռ չի ընդունելու իր շարքերը: Մենք հակասություն չենք տեսնում եվրոինտեգրման եւ եվրասիական ինտեգրման գործընթացների միջեւ, որովհետեւ ուղիներ ենք փնտրում երբեւէ ձեւավորվելիք Մեծ Եվրոպայում մեր կայուն տեղը ապահովելու համար: Իմ կարծիքով, մենք պետք է զգույշ լինենք, որովհետեւ երրորդ հեռանկարը, որն ամենաանցանկալին է, այդ երկու գործընթացներից դուրս մնալն է եւ հայտնվելը Մեծ Մերձավոր Արեւելքում, որտեղ մենք եւ վրացիները կարող ենք միակ քրիստոնյա պետությունները լինել: Ես հիշեցրի, որ անցյալում Հայաստանը մեծ է եղել եւ նշանակալից տեղ է ունեցել Մերձավոր եւ Միջին Արեւելքի սահմանին, բայց այսօր Հայաստանը փոքր պետություն է եւ աշխարհաքաղաքական նոր միավոր դարձած Հարավային Կովկասի մասը: Հարավային Կովկասի երեք երկրները տարբեր են գնահատում իրենց անվտանգ գոյության պայմանները եւ միմյանցից տարբերվող միջավայրերում են փնտրում իրենց ներդաշնակ գոյության ապագան: Ուրեմն, պետք է գտնվեն այնպիսի ուժգին շահագրգռող խթաններ, որոնք տարածաշրջանի ժողովրդների հետաքրքրությունն ուղղեն, ասենք, դեպի Եվրասիական միություն: Այդ կարգի քննարկումները, ինչպիսին Մինսկինն էր, լուրջ ներդրում են նման հետաքրքրություն առաջացնելու գործում, եթե ուղեկցվեն գործի հաջողությունն ապահովող լուրջ ռեսուրսներով եւ ներդրվող ջանքերով:

Պարզ է նաեւ, որ առաջնահերթ խնդիրներից մեկը եվրասիական ընդհանուր տեղեկատվական տարածք ձեւավորելու խնդիրն է: ԱՊՀ տարածքի երկրներում շատ տարբեր են լրատվության պատրաստման եւ տարածման եղանակները; Բայց ամենուրեք մեծ է հեռուստատեսության դերը եւ աճում է համացանցից օգտվողների թիվը: Ահա թե ինչու հատուկ կարեւորություն է ստանում լրատվական քաղաքականությունը, այսինքն, թե ինչպես են լրատվամիջոցները հետաքրքրություն առաջացնում դեպի եվրասիական ինտեգրման գործընթացներ: Վերջին քսան տարիների ընթացքում մեզանից յուրաքանչյուրը բազմաթիվ անգամներ մասնակցել է ամերիկյան կամ եվրոպական նախաձեռնությամբ անցկացվող սեմինարների եւ կլոր սեղանների, եւ մեր լրագրողական գործելաոճն ու ավանդույթները որոշակիորեն ձեւավորված են նաեւ այդ ազդեցությամբ: Հաճելի նորություններից մեկն այն է, որ եվրասիական ինտեգրման գործընթացների ծավալմանը զուգահեռ մեծանալու է ուշադրությունը ԶԼՄ-ների նկատմամբ, որոնց հատուկ առաքելությունը այս թեմաները հասարակություններին մատուցելու գործում շեշտվեց ուղղակիորեն: ՖԵԱՄ-ի բոլոր մասնակիցները միջազգային հետաքրքրությամբ փորձում էին կանխատեսել, թե արդյոք հետեւողական կլինի՞ եվրասիական ինտեգրումը խորացնելու ուղղված քաղաքական կամքը, եւ կբավարարե՞ն միջոցները վերոհիշյալ խնդիրն առաջ մղելու համար:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան,
բանասիրական գիտությունների
թեկնածու



# Քաղաքականության մեջ հանցագործները տեղ չունեն

## *ՌԴ նախագահի Վլադիմիր Պուտինի ամենամյա ուղերձը Դաշնային ժողովին*

Դեկտեմբերի 12-ին ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը** Մոսկվայի Կրեմլյան Մեծ պալատի Գեորգիեւյան դահլիճում հրապարակել է Դաշնային ժողովին ուղղված իր ամենամյա ուղերձը: Արարողությանը ներկա էին ՌԴ Դաշնային խորհրդի եւ կառավարության անդամներ, Պետական դումայի պատգամավորներ, նահանգապետական կազմը, հասարակական-քաղաքական գործիչներ, ԶԼՄ ներկայացուցիչներ:



Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնը ստանձնելու երեք ժամանակահատվածներում սա Վլադիմիր Պուտինի նմանօրինակ 9-րդ ուղերձն է: ՌԴ նախագահն անդրադարձել է պետության առջեւ ծառացած մի շարք հրատապ հարցերի: Մասնավորապես, խոսելով միգրացիոն խնդիրների մասին՝ Պուտինը նշել է, որ պետք է խստացվեն պատիժները ՌԴ-ում անօրինական բնակություն հաստատած արտերկրացիների համար, իսկ արդեն 2015 թվականից Ռուսաստան մուտք գործել հնարավոր կլինի միայն արտասահմանյան անձնագրի առկայության դեպքում: «Ես կարծում եմ, որ անօրինական ներգաղթի եւ միգրացիոն հաշվառման կանոնների խախտման դեմ պատժամիջոցների խստացումը հիմնավորված է եւ անհրաժեշտ»,- հայտարարել է Պուտինը՝ նշելով նաեւ, որ ԱՊՀ երկրները, որտեղից քաղաքացիներն արտագաղթում են Ռուսաստան ներքին օգտագործման անձնագրերով, արդեն վաղուց կայացել են որպես պետություն:

Ռուսաստանի նախագահն իր ուղերձում հայտարարել է նաեւ, որ ռուսական ընկերությունների կողմից արտասահմանյան իրավասություններն ընտրելը վկայում է երկրի ներսում առկա խնդիրների մասին: Պուտինը կոչ է արել սկսել տնտեսության «ապաօֆշորացումը», իսկ կառավարությանը հանձնարարել է համապատասխան շտկումներ մտցնել օրենսդրության մեջ: «Գործարարությունը հայրենասիրական դարձնելու լավագույն միջոցը սեփականության պաշտպանության երաշխիքների ապահովումն է, բիզնեսն ապաքրեականացնելն ու գործարարների նկատմամբ «պատվիրված» քրեական գործերից հրաժարվելը»:

ՌԴ նախագահը գտնում է, որ ռուսական քաղաքականության մեջ մրցակցությունը շատ կարեւոր է, սակայն դիվանագետները պետք է պայքարեն ազնվորեն: Անդրադառնալով Ռուսաստանի միասնության ու ինքնիշխանության խնդրին՝ Պուտինը նշել է, որ անջատողականության որեւէ դրսեւորում պետք է բացառվի քաղաքական օրակարգից, եւ արտաքին ցանկացած ներգրավվածությունը պետության գործերին պետք է համարվի անընդունելի. «Դիվանագետը, որը գումարներ է ստանում արտերկրից, չի կարող գործունեություն ծավալել մեր երկրում: Քաղաքականության մեջ հանցագործները տեղ չունեն եւ չեն կարող ունենալ, սա պետք է դառնա կանոն: Իսկ քաղաքակիրթ երկխոսություն հնարավոր է այն ուժերի հետ, որոնք քաղաքակիրթ կերպով են ներկայացնում իրենց առաջարկությունները: Պետությունը պետք է ապահովի ուղիղ կապ քաղաքական կուսակցությունների եւ ԶԼՄ-ների միջեւ ոչ միայն նախընտրական քարոզարշավի, այլեւ առօրյա կյանքում»:

ՌԴ նախագահը Դաշնային ժողովին հղած ուղերձում տեղեկացրել է նաեւ, որ Ռուսաստանում ներկայումս գործում է 48 կուսակցություն, ավելի քան 200-ը ստեղծման փուլում են եւ պատրաստվում են գրանցման:

Ուղերձում տեղ են գտել նաեւ Հայաստանի քաղաքացիների համար հետաքրքրություն ներկայացնող դրույթներ: Այսպես, ՌԴ նախագահը դիմելով Դաշնային ժողովին հայտարարել է, որ ռուսաց լեզվի միջազգային օլիմպիադաների հաղթողները ԱՊՀ երկրներից պետք է հնարավորություն ունենան շարունակելու ուսումը Ռուսաստանի առաջատար բուհերում. «Պետք է ստեղծել օլիմպիադաների միջազգային դպրոցներ, դրանց հաղթողներն ու մրցանակակիրները պետք է իրավունք ստանան ընդունվելու մեր երկրի առաջատար բուհերը»:

Պուտինը նշել է նաեւ, որ ԱՊՀ երկրների դպրոցները, որտեղ ուսուցումը ռուսաց լեզվով է ընթանում, պետք է աջակցություն ստանան դասագրքերի եւ նյութական բազայի գծով: «Նաեւ հանձնարարում եմ կառավարությանը առաջարկություններ ներկայացնել ռուսաց լեզվի հեռավար ուսուցման վերաբերյալ: Այն պետք է մատչելի լինի ԱՊՀ երիտասարդների համար»,- հավելել է ՌԴ նախագահը:

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**Մոսկվայում «Ազգի» հատուկ թղթակից**

# Մոսկվան պատրաստվում է Սիրիայից տարհանել ռուսաստանցիներին

Երեկ առավոտյան Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում տեղի է ունեցել հերթական ահաբեկչությունը: Ականված ավտոմեքենայի պայթյունից սպանվել են 16 եւ վիրավորվել 25 անձինք: Միջադեպը տեղի է ունեցել Կատանայի շրջանում, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ սիրիացի ընդդիմադիրները Դամասկոսում սպառնացել են դաժան հաշվեհարդար տեսնել ռուսաստանցի, ուկրաինացի եւ իրանցի դիվանագետների հետ: Թեեւ դիվանագետները դեռ Սիրիայում են, բայց ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Բոգդանովը երեկ հայտարարել է, որ Մոսկվան «մոբիլիզացիոն ծրագրեր» ունի ի դեպս Սիրիայից ռուսաստանցիների տարհանման, չնայած նրանց մեծ մասը հյուպատոսական հաշվառման չի ենթարկվել: Պատճառը խառնամուսնություններն են եւ դրանցից ծնված երեխաները, նշել է Բոգդանովը: Նրա խոսքերով, այդ մարդկանց կեսը պաշտպանում է սիրիական ընդդիմությանը:

Բոգդանովը նաեւ չի բացառել սիրիական ընդդիմության հաղթանակի հնարավորությունը, հիշեցնելով, որ «Սիրիայի բարեկամների» խմբի 130 երկրները ճանաչել են «Սիրիայի ազգային կոալիցիան», եւ որ նախագահ Բաշար Ասադի վարչակարգը շարունակում է տարածքներ կորցնել: «Ցավոք, ընդդիմության հաղթանակը չի բացառվում», ասել է Բոգդանովը:

**ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

# 2060 թ. ԱՄՆ-ում սպիտակամորթները փոքրամասնություն կկազմեն

**Հինգ տասնամյակ հետո ԱՄՆ-ի բնակչության մեջ սպիտակամորթները կվերածվեն փոքրամասնության: Երկրում առայժմ գերակշռող այդ ռասայի ներկայացուցիչների թիվը բարձրակետին կհասնի 2024-ին, իսկ դրանից հետո անշեղորեն կնվազի եւ ներկայիս 64 տոկոսից (197,8 մլն մարդ) կիջնի մինչեւ 43 տոկոսի: Միեւնույն ժամանակ «գունամորթ» բնակչության բաժինը ներկայիս 37 տոկոսից կհասնի 57 տոկոսի, ասվում է ԱՄՆ մարդահամարի գրասենյակի հրապարակած կանխատեսման մեջ:**

**Մասնավորապես աֆրոամերիկացիների բաժինը կկազմի 14,7 տոկոս, որը փոքր-ինչ ավելի է, քան ներկայիս լատինամերիկացիների եւ ասիացիների թիվը: Ներկայումս լատինամերիկացիները կազմում են ԱՄՆ բնակչության 17 տոկոսը, իսկ 2060-ին նրանք կկազմեն 31 տոկոս: Երեք ամերիկացուց մեկը կունենա լատինամերիկյան արմատներ:**

**Համանման վիճակ կստեղծվի նաեւ ասիական ծագում ունեցող ամերիկացիների դեպքում: ԱՄՆ-ի ամբողջ բնակչության մեջ նրանց բաժինը ներկայիս 5 տոկոսից 2060-ին կհասնի 8 տոկոսի:**

**Այսպիսով, սպիտակամորթ ամերիկացիները միակ ռասան են, որի ներկայացուցիչների թիվը առաջիկա կես դարի ընթացքում կնվազի: Ժողովրդագիրների կարծիքով, դրա գլխավոր պատճառը «գունամորթների» ոչ այնքան ներգաղթն է, որքան ներգաղթյալների ծնելիության բարձր մակարդակը, որն անհամեմատ գերազանցում է սպիտակամորթների համանման ցուցանիշը:**

**ԱՄՆ-ի բնակչության շրջանում ռասայական եւ էթնիկական փոփոխությունները զգացվում են արդեն այսօր: ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ անցյալ տարի ներգաղթյալների երեխաները մեծամասնություն կազմեցին մինչեւ 1 տարեկան երեխաների մեջ:**

**Փորձագետների կանխատեսումների համաձայն, արդեն մինչեւ 2019 թվականը համանման իրավիճակ կստեղծվի նաեւ դեռահասների շրջանում:**

**«Սպիտակամորթ ոչ լատինամերիկյան բնակչությունը ԱՄՆ-ում կմնա խոշորագույն խումբը, բայց կդադարի մեծամասնություն լինելուց», նշում է մարդահամարի ղեկավար Թոմաս Մեզենբուրգը: Մեկ ուրիշ փորձագետ՝ Կալիֆոռնիայի համալսարանի կրթության եւ տեղեկատվական հետազոտությունների բարձրագույն դպրոցի դեկան Մարսելո Սուարես-Օրոզկոն նշում է, որ ԱՄՆ-ը կդառնա աշխարհի առաջին խոշոր գերզարգացած հասարակությունը, որտեղ փոքրամասնությունները կվերածվեն մեծամասնության:**

# «Սիրիայի բարեկամների» խումբը ճանաչեց «Սիրիայի ազգային կոալիցիան»

## *Ալավիներին քաղաքացիական անհնազանդության կոչ է արվում*



Մարոկկոյի Մարաքեշ քաղաքում «Սիրիայի բարեկամների» խմբի անդամ 130 երկրների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ «Սիրիայի ազգային կոալիցիան» ճանաչվել է որպես Սիրիայի միակ օրինական իշխանություն: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Հանդիպմանը մասնակցում էին 60 նախարար, սիրիացի ընդդիմադիրներ եւ միջազգային կազմակերպություններ:

«Սիրիայի բարեկամների» խմբում կան Ասադի վարչակարգի տապալմանը ձգտող ինչպես արաբական, այնպես էլ արեւմտյան երկրներ: Հանդիպման մասնակիցները Ասադին հորդորել են անձնատուր լինել եւ ընդգծել են, որ նրա վարչակարգը չի խուսափի պատժից, քանի որ խախտել է միջազգային օրենքները: Խումբը նաեւ նախազգուշացրել է, որ Սիրիայում քիմիական զենքի գործադրումը «կառաջացնի միջազգային ընկերակցության լուրջ հակազդեցությունը»:

Ավելի վաղ «Սիրիայի ազգային կոալիցիան» ճանաչել էին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Եվրոմիությանը, Պարսից ծոցի միապետությունները, ԱՄՆ-ը:

Նոյեմբերի 11-ին ընդդիմադիր ուժերից ձեւավորված «Սիրիայի ազգային կոալիցիայի» ղեկավարն է հոգեւորական Ահմեդ ալ Խաթիբը:

Մարաքեշի հանդիպման ժամանակ նաեւ քննարկվել է Սիրիային մարդասիրական օգնություն հասցնելու հարցը: Կատարվել են խոշոր նվիրատվություններ ի նպաստ մարդասիրական կազմակերպությունների: Սաուդյան Արաբիան հասցրել է 100 մլն դոլար:

Հանդիպման ժամանակ սիրիական ընդդիմությունը նախագահ Ասադին պաշտպանող ալավի փոքրամասնությանը կոչ է արել քաղաքացիական անհնազանդության արշավ սկսել Ասադի վարչակարգի դեմ:

# Նորայր Մեհրաբյան. «Ես ունեմ ներաշխարհ, որն ինձ թելադրում է ստեղծել իմ ձեռագիրը»



Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական անսամբլը տոնում է իր 25-ամյակը: Համույթը մեծ հաջողությամբ հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում: Բացի հայկական ժողովրդական երաժշտության հիման վրա բեմադրված պարերից, անսամբլի պարացանկում կան նաեւ աշխարհահռչակ արդի կոմպոզիտորների երաժշտություններով բեմադրված պարեր, ժամանակակից համարներ: Անսամբլի հիմնադիր, գեղարվեստական ղեկավարն է ՀՀ ժողովրդական արտիստ **Նորայր Մեհրաբյանը**, որն անսամբլի 25-ամյակի կապակցությամբ ասաց. «Հաճելի է խոսել մի պարախմբի մասին, որն այսօր իր ուրույն դերն ունի մեր մշակութային կյանքում: Հեշտ չէր 25 տարի ղեկավարել երիտասարդներին, քանի որ նրանց պետք է դաստիարակել որպես լավ անձնավորություններ, հետո որպես լավ պարողներ: Սկզբնական շրջանում մեր ճանապարհը փշոտ էր, քանի որ մեր անսամբլի բացումից հետո տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը: Այդ ժամանակ՝ ձմռանը, մենք օրական 4 համերգային ծրագրով էինք հանդես գալիս: Իսկ ընդհանրապես համերգային ծրագրերով հանդես ենք եկել մի շարք երկրներում, համերգասրահներում, սակայն ինձ համար ամենաթանկը պատերազմից հետո Արցախում տեղի ունեցած ելույթներն էին»: Նշենք, որ 1987 թվականին ՀՀ ժողովրդական արտիստ Նորայր Մեհրաբյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Բարեկամություն» անսամբլը: Առաջին օրվանից անսամբլը հանրությանը գրավեց իր բազմաժանր պարացանկով, տարբեր ազգերի ժողովրդական պարերի վառ շարքով, իսկ պրոֆեսիոնալ մոտեցումը, քրտնաջան աշխատանքը եւ սերը դեպի պարարվեստը դարձան անսամբլի հաջողության գրավականը: Հայկական ազգային պարը «Բարեկամության» միջոցով ներկայացվեց հանդիսատեսին դասական խորեոգրաֆիայով:

Անսամբլի տնօրեն Տիգրան Մխոյանն էլ իր հերթին ավելացրեց. «Բարեկամություն» պարի անսամբլը հասել է այն մակարդակին, որ մենք պարզ ճակատով կարող ենք ներկայանալ աշխարհին: Թիմը ոգեւորված աշխատում է, որպեսզի լավ արդյունք ստանա»:

2008-ին համույթին շնորհվեց «Վաստակավոր կոլեկտիվ» կոչումը:

Ի դեպ, անսամբլի կողմից վերականգնվել է «Լոռեցի Սաքո» խորեոգրաֆիկ ներկայացումը եւ «Աշխարհի ժողովուրդների պարեր» համերգային ծրագիրը:

«Պարն ինքնանպատակ չի կարող լինել, այն պետք է արտահայտի ուրախություն, պայքար, ամեն ինչ, ինչ մեզ շրջապատում է: Ես հնի վրա կառուցում եմ նորը, ունեմ ներաշխարհ, որն ինձ թելադրում է ստեղծել իմ ձեռագիրը: Մեր անսամբլը տարբերվում է մյուսներից, քանի որ մեր ձեռագիրն ուրիշ է»,- ասաց Նորայր Մեհրաբյանը եւ ավելացրեց. «Իմ նպատակն էր ստեղծել այնպիսի ճկուն կոլեկտիվ, որը կկարողանա պարել ե՛ւ հայկական, ե՛ւ մոդեռն, ինչպես նաեւ մեկնաբանել Բաբաջանյան»:

«Բարեկամություն»-ը իր ստեղծման առաջին իսկ տարիներից սկսած մեծ հաջողությամբ հանդես է եկել աշխարհի տարբեր բեմերում՝ Գերմանիա, Ռուսաստան, Հնդկաստան, Իտալիա, Անգլիա, Չինաստան, Ֆրանսիա եւ այլն՝ արժանապատվորեն եւ բարձր պրոֆեսիոնալ մակարդակով ներկայացնելով հայկական պարարվեստը օտար եւ սփյուռքահայ հանդիսատեսին:

25 տարի շարունակ «Բարեկամություն»-ը մնաց Հայաստանում ամենաակտիվ ստեղծագործական եւ համերգային գործունեություն վարող կոլեկտիվներից մեկը՝ շնորհիվ գեղարվեստական ղեկավար Նորայր Մեհրաբյանի եւ միշտ կատարելության ձգտող պրոֆեսիոնալ կազմի:

Օրեր առաջ ստեղծվել է վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական անսամբլի տեսասկավառակը, որում ամփոփված է 24 պար: Տեսասկավառակի մեջ մեծամասամբ ներառված են հայկական պարեր:

Անսամբլի գլխավոր հովանավորն է ՎիվաՍել ՄՏՍ-ը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ալեն Դելոնը շուտով Հայաստանում

«Enjoy» movies եւ «AP» cinema կինոընկերությունների համատեղ արտադրությամբ հայ հանդիսականին կներկայացվի «Շնորհավոր Ամանոր, մայրեր» լիրիկական կոմեդիան: Ֆիլմի գլխավոր հերոսն աշխարհահռչակ դերասան Ալեն Դելոնն է, որն էլ շուտով կայցելի Հայաստան, ներկա գտնվելու կինոալմանախի պրեմիերային:

Ֆիլմը բաղկացած է հինգ նովելից, որոնցից յուրաքանչյուրը նկարահանել է մի առանձին ռեժիսոր՝ Արտեմ Ակսենենկո, Սարիկ Անդրեասյան, Անտոն Բորմատով, Դմիտրի Գրաչեւ, Կլիմ Պոպլավսկի:



«Շնորհավոր Ամանոր, մայրեր» կինոալմանախը հանդիսատեսի մեծ համակրանքը վայելած «Մայրեր» ֆիլմի շարունակությունն է: Ֆիլմը նկարահանվել է Ռուսաստանում եւ Ֆրանսիայում:

«Շնորհավոր Ամանոր, մայրեր» կինոալմանախում կտեսնենք նոր պատմություններ եւ նոր հերոսների նոր արկածներ՝ միավորված մեկ զգացմունքով՝ սեր մայրերի հանդեպ: Ալմանախում ներկայացված է 5 նովել՝ հումորային եւ հուզական, լիրիկական եւ կոմիկական: Յուրաքանչյուր նովել պատմում է մոր եւ երեխայի՝ երկու ամենահարազատ մարդկանց սիրո մասին:

«Շնորհավոր Ամանոր, մայրեր» ֆիլմի բյուջեն կազմում է 6 միլիոն դոլար (ներառյալ գովազդային-մարքեթինգային ծախսերը), իսկ արտադրության վրա ծախսվել է 2 միլիոն դոլար:

Կինոնկարի պրոդյուսերներն են՝ Գեորգի Մալկով, Սարիկ Անդրեասյան, Ղեւոնդ Անդրեասյան, Վալերի Սահարյան, Վլադիմիր Պոլյակով:

Հայաստանյան պրեմիերան տեղի կունենա դեկտեմբերի 18-ին «Մոսկվա» կինոթատրոնում, իսկ Մոսկվայում ֆիլմի պրեմիերան տեղի կունենա դեկտեմբերի 19-ին, հայաստանյան պրեմիերայից հետո, որին եւս կմասնակցի Ալեն Դելոնը:

Իսկ ֆիլմը էկրան կբարձրանա դեկտեմբերի 27-ից:

Ի դեպ, կինոալմանախին նվիրված մամուլի ասուլիսը տեղի կունենա դեկտեմբերի 18-ին: Բանախոսներ են լինելու՝ Ալեն Դելոնը, Իրինա Ռոզանովան, Կոնստանտին Կրյուկովը, ինչպես նաեւ ֆիլմի ռեժիսոր Սարիկ Անդրեասյանը, պրոդյուսերներ՝ Վալերի Սահարյանը եւ Ղեւոնդ Անդրեասյանը:

Մ. Հ.

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# Արտավազդ Փելեշյանին ՀՀ քաղաքացիության անձնագիր



Մ. Մ.

Աշխարհահռչակ հայ կինոռեժիսոր **Արտավազդ Փելեշյանի** ֆիլմերը դասվել են աշխարհի կինոակադեմիաների ուսուցողական ծրագրերի շարքում ու հարստացրել համաշխարհային կինոյի ոսկե ֆոնդը: Տաղանդավոր արվեստագետը համեստ, մեղմ, մանկական բնավորությամբ քչախոս մարդ է, փոխարենը խոսում են նրա ֆիլմերը՝ խորը հոգեբանական մեկնաբանությամբ:

Երեկ ՀՀ մշակույթի նախարարությունում հավաքվել էին հայ կինոյի շատ ներկայացուցիչներ, ներկա գտնվելու, թերեւս ուշացած, բայց երբեք ոչ ուշ, Արտավազդ Փելեշյանին եւ նրա տիկնոջը՝ Աիդա Գալստյանին ՀՀ քաղաքացիության անձնագրեր հանձնելու արարողությանը: Նախարար **Հասմիկ Պողոսյանը** ողջունեց հյուրերին եւ ասաց. «Այսօր մեզ համար մեծ պատիվ է կրկին հյուրընկալել համաշխարհային ճանաչում ունեցող մեր հայրենակցին՝ Արտավազդ Փելեշյանին: Առաջնորդվելով ՀՀ սահմանադրությամբ եւ ՀՀ քաղաքացիության մասին օրենքով, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրել է հրամանագիր, որով ՀՀ քաղաքացու կոչում է շնորհել Արտավազդ Աշոտի Փելեշյանին եւ տիկնոջը՝ Աիդա Հակոբի Գալստյանին»: Անձնագիրը հանձնելու պատիվը տրվել էր նախարարին: Արտ. Փելեշյանը եւ նրա տիկինը ընթերցեցին երդման տեքստը եւ նախարարի ձեռքից ստացան անձնագրերը:

Փելեշյանին եւ տիկնոջը շնորհավորելով, Հայաստանի կինոակադեմիայի նախագահ **Դավիթ Մուրադյանն** ասաց. «Փելեշյանը այսօր մեր երկրի անձնագիր ստացավ, բայց նրա արվեստը վաղուց մեր երկրի անձնագիրն է ամբողջ աշխարհում՝ առանց վիզայի հաղթահարում է բոլոր սահմանները, որովհետեւ դա տաղանդի անձնագիր է: Նրա կինոն մեզ դարձնում է հպարտ, մեզ դարձնում է իմաստուն, մեզ կապում է մեր երկրի պատմական ճակատագրի ու ներկայի հետ: Փելեշյանի հասցեն Հայաստանն է, նամակը՝ աշխարհին»:

Կինոգործիչների միության նախագահ **Ռուբեն Գեւորգյանի** շնորհավորանքներին ու մեծարման խոսքերին միացան «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի նախագահ **Հարություն Խաչատրյանը**, Հայաստանի կինոկենտրոնի նախագահ **Գեւորգ Գեւորգյանը** եւ ուրիշներ:

Հ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ 2013 թ. հուլիս ամսին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի 10-ամյակի շրջանակներում մեծ շուքով կտոնվի Արտավազդ Փելեշյանի 75-ամյակը: Փելեշյանի արվեստը իր սրտից է հորդում եւ գաղտնիքը մեզ է մատուցում սրտանց: Փելեշյան կինոռեժիսորը մեր ազգի պատիվն է ու պարծանքը, մեր հողի ու ջրի մարդն է, որտեղ էլ որ լինի:

Արտավազդ Փելեշյանը շնորհակալություն հայտնեց բոլորին եւ ասաց. «Բոլորդ ճառ ասելով նշեցիք, որ ես դարձա մեր երկրի քաղաքացի, այսինքն՝ ձեր երկրի քաղաքացի: Ոչ, Հայաստանը իմ հայրենիքն է, իմ երկրի քաղաքացին եմ ես: Հպարտ եմ հայ լինելու, հայ ծնվելու համար»:

«**Ազգի**» հարցին, թե ե՞րբ կտեսնենք «Հոմոսապիենս» ֆիլմը, ասաց, «Երբ որ փող գտնենք: Այդ սցենարը իրականացնելու համար շատ մեծ գումար է անհրաժեշտ եւ միայն Հայաստանով դժվար կլինի»:

Հասմիկ Պողոսյանը ավելացրեց, որ արդեն Փելեշյանի հետ խոսել են մի նոր ֆիլմի ստեղծման շուրջը, որը պետք է մոնտաժվի ու ավարտվի, որից հետո նոր պետք է մտածենք «Հոմոսապիենս» ֆիլմի մասին: Իսկ թե ինչպե՞ս է կոչվելու մոնտաժման ընթացքում գտնվող ֆիլմը եւ ինչի՞ մասին է այն՝ «**Ազգի**» հարցին պրն Փելեշյանն ասաց. «Առայժմ այդ ֆիլմը պայմանական մի քանի անուն ունի՝ «Բնության ուժը» կամ «Տարերք»: Դեռ վերջնական չեմ որոշել: Իսկ ֆիլմը բնության բոլոր տարերքների մասին է, ներառյալ Հայաստանի երկրաշարժը: Եթե ես կարողանամ այս երկու ֆիլմերը անել, ապա դա կլինի լավագույնը առաջիկա իմ ծրագրերում», ասաց Փելեշյանը:

Հավելենք, որ պրն Փելեշյանը նախապատրաստում է նյութեր իր կյանքի ու ստեղծագործական անցած ուղու վերաբերյալ, որոնք կհրատարակվեն կինոռեժիսորի 75-ամյակի առթիվ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Բանազավրի օթյակը»

## *Պոեզիայի դեկորատիվ ցուցահանդես-ներկայացում*

Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում բացվել է բանաստեղծ Հրանտ Ալեքսանյանի ստեղծագործությունների հիման վրա կերտված դեկոր-կոմպոզիցիաների ցուցադրությունը՝ որպես նորարարական-փորձարարական արվեստի արտահայտություն: Դեկորների հեղինակն է գեղանկարիչ Ռաֆայել Պետրոսյանը, ով բանաստեղծի հետ սերտ համագործակցությամբ բազմաթիվ բանաստեղծական տեքստերի համար ստեղծել է գեղարվեստական նոր միջավայր: Պոեզիան եւ կոլլաժային ժանրը միահյուսվելով իրար՝ ծնունդ են տվել մոդեռն մի ոճի, որը հնարավորություն է տալիս անմիջականորեն եւ նորովի ընկալելու բանաստեղծությունը: Հեղինակների կերտած «Բանազավրը» այն կերպարն է, որ առաքելություն ունի ժամանակակից մարդուն պահելու ճշմարիտ, գեղեցիկ եւ կենսական խոսքի՝ Բանի տիրույթում:

Պոեզիայի դեկորատիվ այս թատրոնը մի ուշագրավ փորձ է՝ գտնելու գեղագիտական թարմ ասպեկտներ՝ համահունչ մեր ժամանակի ոգուն ու նորացվող մտածողությանը:

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

**_Ինչպես միշտ, մրցաշրջան-2012-ն էլ հագեցած էր շախմատային խոշոր մրցաշարերով ու հաջող էր հայ շախմատիստների համար: Հայաստանի տղամարդկանց հավաքականը Ստամբուլում կայացած շախմատի համաշխարհային օլիմպիադայում 3-րդ անգամ արժանացավ չեմպիոնի տիտղոսին: Այս անգամ էլ թիմի հաղթանակում իր ներդրումն ունեցավ միջազգային գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանը, որը հատկապես թիմային մրցաշարերում իրեն շատ լավ է դրսեւորում:_**

այդ թիմի կազմում նվաճել եմ Եվրոպայի ակումբային առաջնության հաղթողի տիտղոսը: Մրցաշարի ընթացքում մենք մի պահի թուլացանք, հետնապահի հետ մրցախաղն ավարտեցինք ոչ-ոքի, որի պատճառով զրկվեցինք մրցանակային տեղից:

**- «Բաուեռնի» հետ խաղալիս ինչպիսի՞ զգացում ունեիր:**

- Ի տարբերություն ֆուտբոլային ակումբի, շախմատի թիմը շատ թույլ է, որին մեծ առավելությամբ հաղթեցինք: Չնայած ժամանակին լավ թիմ են ունեցել:

**- Սամվել Տեր-Սահակյանին քո խորհրդո՞վ էին թիմում ընդգրկել:**

գիրք է, շատ անկեղծ գրված, որտեղ բերված են Լեւոնի շախմատային կենսագրության ուրախ եւ տխուր պահերը: Կարծում եմ, որ նման գրքերը կարող են ուսուցողական լինել մեր պատանի շախմատիստների եւ նրանց ծնողների համար: Գիրքն ընթերցելիս տեղեկանում ես, թե ինչպիսի ճանապարհ է անցել Լեւոնը մինչեւ շախմատային բարձունքները նվաճելը, ինչպիսի ուղի են անցել նրա ծնողներն իրենց զավակին փառքի բարձունքին հասցնելիս:

Լեւոնն ինձ շատ հարազատ մարդ է, մանկությանս ընկերն է: Հազվադեպ է պատահում, որ

# Գաբրիել Սարգսյան. «2012-ը կարիերայիս ամենահաջողված տարիներից մեկն է»

**- Գաբրիել, ավարտվում է մրցաշրջանը, որը կարծում եմ հաջող էր քեզ համար: Դու հավաքականի կազմում 3-րդ անգամ դարձար օլիմպիական չեմպիոն: Իսկ անհատական մրցաշարերում ունեցած ելույթներիցդ գո՞հ ես:**

- Ընդհանուր առմամբ տարին շատ հաջող էր ինձ համար: Մինչեւ օլիմպիական չեմպիոնի տիտղոսը 3-րդ անգամ նվաճելն անհատական մրցաշարերում էլ 2 անգամ հաղթող էի դարձել, մյուս մրցաշարերում էլ վատ հանդես չեմ եկել: Այնպես որ 2012-ը կարիերայիս ամենահաջող տարիներից մեկն է:

**- Մինչեւ տարեվերջ որեւէ մրցման մասնակցելո՞ւ ես:**

- Մեկնում եմ Վարշավա, որտեղ մասնակցելու եմ արագ շախմատի Եվրոպայի առաջնությանը: Լավ եմ տրամադրված, հույս ունեմ հաջող հանդես գալ: Լեւոն Արոնյանի հետ 10-օրյա ուսումնամարզական հավաք եմ անցկացրել Ծաղկաձորում, ինչը օգնեց ինձ նաեւ որոշ չափով թոթափել հոգնածությունը:

**- Վերջերս դու Սամվել Տեր-Սահակյանի հետ հանդես եկար Իսպանիայի շախմատի ակումբային առաջնությունում: Անկեղծ ասած, անսպասելի էր քո թույլ ելույթը: Ինչո՞վ էր դա պայմանավորված:**

- Հիմնականում հոգնածությունն էր պատճառը: Այս մրցաշրջանն իրոք ծանրաբեռնված էր ինձ համար, օլիմպիադայից հետո չէի հասցրել լիովին վերականգնել ուժերս, հանգստանալ: Բացի այդ էլ, առանձնակի խթան Իսպանիայի ակումբային առաջնությունում չկար:

**- Ֆինանսակա՞նը նկատի ունես:**

- Ոչ, ֆինանսական առումով ամեն ինչ նորմալ էր: Ես 2004-ից պայմանագրով հանդես եմ գալիս «Լինեքս Մաջիքում»: Պարզապես հավաքականից հետո այդ թիմում խաղալն այլ է, հոգեբանական ուրիշ մթնոլորտ է: Թեեւ կարող եմ հավաստել, որ «Լինեքս Մաջիքում» ընկերական, ջերմ մթնոլորտ էր տիրում: Ժամանակին



- «Լինեքս Մաջիքը» երիտասարդ շախմատիստ էր փնտրում եւ ես խորհուրդ տվեցի թիմում ընդգրկել Սամվելին: Հույս ունեմ, որ հաջորդ տարի էլ նրան կհրավիրեն թիմ:

**- Տեղյակ եմ, որ Լեւոն Արոնյանի հետ վարում ես շախմատի դպրոցում կազմակերպվող դասընթացները: Ինչպե՞ս են գործերդ այնտեղ:**

- Դեկտեմբերի 1-10-ը Ծաղկաձորում շնորհալի պատանի շախմատիստների համար հերթական պարապմունքներն էին կազմակերպվել: Քանի որ Լեւոնը մասնակցում էր Լոնդոնի մրցաշարին, ինձ հետ դասընթացները վարեցին Լեւոն Բաբուջյանը, Արման Փաշիկյանն ու Դավիթ Հարությունյանը: Ամեն ինչ ընթանում է ծրագրին համապատասխան:

**- Գաբրիել, հայտնի է, որ դու շատ մտերիմ ես Արոնյանի հետ, մի շարք մրցաշարերում նրա մարտավկան ես եղել: Վերջերս ներկա էիր նրա մասին գրքի շնորհանդեսին, որտեղ ջերմ խոսքեր հնչեցրիր ընկերոջդ հասցեին: Կխնդրեի մեզ հետ եւս կիսել Լեւոնի մասին քո պատկերացումները:**

- Նախ ասեմ, որ ինձ վաղուց էր հայտնի Արոնյանի մասին նրա մոր՝ Սեդա Արոնովայի գիրք գրելու մտահղացումը: Արդեն ընթերցել եմ գիրքը: Իսկապես հոյակապ

մարդը հանճարեղ լինելուն զուգընթաց նաեւ լավ անձնավորություն է լինում, ունենում է լավ ընկերներ ու բարեկամներ: Հանճարները, որպես կանոն, հասարակ մարդկանց վերեւից են նայում: Իսկ Լեւոնի մոտ նման բան երբեք չես նկատի: Այդ առումով նա բացառիկ անձնավորություն է, շատ ուրախ եմ Լեւոնի հետ ընկերություն անելու համար:

Տիկին Սեդային էլ երկար տարիներ ճանաչում եմ: Նա մեծ դեր ունի Լեւոնի շախմատային հաջողություններում: Դժվար է պատկերացնել, թե առանց նրա Լեւոնն այսօր շախմատում ինչպիսի դիրք կգրավեր: Շատ դժվարին էր մեր մանկության ժամանակահատվածը, տեսել ու զգացել եմ, թե ինչպիսի դժվարություններ է հաղթահարել Լեւոնի ընտանիքը: Տիկին Սեդան Լեւոնի ընկերների համար 2-րդ մայր է: Հաճախ է պատահել, որ մրցաշարերի մասնակցության ժամանակ բնակվել ենք Բեռլինում գտնվող նրանց տանը, նույնիսկ երբ Լեւոնը բացակայել է երկրից: Այժմ էլ Արոնյանը պատրաստվում է հանդես գալ Չինաստանում: Նրան հաջողություն եմ մաղթում:

**- Քեզ էլ հաջողություն եմ մաղթում Վարշավայում մեկնարկող Եվրոպայի արագ շախմատի առաջնությունում:**

- Շնորհակալություն: Կաշխատեմ հաջող ելույթ ունենալ:

## Անահիտ Բարսեղյանի համեստ արդյունքը

Ստամբուլում մեկնարկած լողի աշխարհի առաջնությունում Անահիտ Բարսեղյանը 100 մ թիկնալողում 67 մասնակիցների մեջ զբաղեցրել է 50-րդ տեղը: Նա մրցատարածությունը հաղթահարել է 1.05,71 րոպեում:

Հայ լողորդուհին չմտավ եզրափակիչ փուլ: Նա Ստամբուլում հանդես կգա նաեւ 50 մ թիկնալողում եւ բատերֆլայ լողաոճում: Բացի Բարսեղյանից, Ստամբուլում հանդես կգան նաեւ Վահան Մխիթարյանը (50 եւ 100 մ ազատ լողաոճ) եւ Մոնիկա Վասիլյանը (50 եւ 100 մ ազատ լողաոճ):

## Դոլուխանովան գրավեց 2-րդ տեղը

Հայաստանը ներկայացնող գրոսմայստեր Եվգենիա Դոլուխանովան հաջող հանդես եկավ Ուկրաինայի Մուկաչյովո քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում: Նա 10 հնարավորից վաստակեց 7 միավոր ու դարձավ 2-րդ մրցանակակիր: Դոլուխանովան ընդամենը կես միավորով հետ մնաց ՖԻԴԵ-ի վարպետ, ուկրաինացի Անտոն Վոլովիկովից:

ՖՈՒՏԲՈԼ

## Առաջին մրցակիցը Լյուքսեմբուրգի հավաքականն է

**Armsport.am-ի տեղեկացմամբ, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը փետրվարի 5-ին Ֆրանսիայի Վալանս քաղաքում ընկերական մրցախաղում ուժերը կչափի Լյուքսեմբուրգի ընտրանու հետ:**

**Ավելի վաղ պայմանավորվածություն էր ձեռք բերվել Թուրքմենստանի հավաքականի հետ 2013-ի մարտի 22-ին Երեւանում ընկերական խաղ անցկացնելու մասին: Իսկ մարտի 26-ին ՀՀ հավաքականը «Հանրապետական»-ում» աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում կհյուրընկալի Չեխիայի ընտրանուն:**

## Հայ բռնցքամարտիկներից 3-ը մտան հաջորդ փուլ



**Կալինինգրադում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի 19-22 տարեկանների առաջնությունում առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց Կորյուն Սողոմոնյանը: Մինչեւ 49 կգ քաշային կարգում Կորյունը 17-12 հաշվով հաղթեց ուկրաինացի Նազար Կուրոտչինին: Քառորդ եզրափակիչում հայ բռնցքամարտիկը կմրցի հունգարացի Իշտվան Լակատոշի հետ, որը 19-17 հաշվով պարտության էր մատնել Գերմանիան ներկայացնող Սերգեյ Նոյմանին:**

**Հաջող էր նաեւ մինչեւ 52 կգ քաշային Նարեկ Աբգարյանի ելույթը, որը 17-16 հաշվով հաղթեց բելառուս Դմիտրի Տրիգելսկուն: Հաջորդ փուլում նրա մրցակիցը կլինի բուլղարացի Ստեֆան Իվանովը, որն առավելության էր հասել վրացի Սեւերիան Չիլաձեի նկատմամբ (15-10):**

**Իսկ ահա մինչեւ 60 կգ քաշային Հովհաննես Բաչկովը դուրս մնաց պայքարից՝ զիջելով ադրբեջանցի Էլվին Իսաեւին (14-17): Պայքարը կշարունակի մինչեւ 64 կգ քաշային Արթուր Քիրաջյանը, որը 16-8 հաշվով պարտության մատնեց հունգարացի Ժոլտ Խերչեկին: Հաջորդ փուլում հայ բռնցքամարտիկի մրցակիցը կլինի լիտվացի Էվալդաս Պետրաուսկասը, որը 12-9 հաշվով պարտության մատնեց ֆրանսիացի Շաբան Ֆեհմին: Քաշային այս կարգում Գերմանիան ներկայացնող Արտյոմ Հարությունյանը 11-17 հաշվով պարտվեց ադրբեջանցի Գայբատուլա Հաջիալիեւին:**

## Էրիկսոնն ու Ֆոմենկոն հավակնում են Ուկրաինայի հավաքականի ղեկին

**Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը քննարկելով ազգային հավաքականի գլխավոր մարզչի 5 թեկնածուների ցանկը, որոշել է թողնել 2-ին՝ շվեդ մասնագետ Սվեն-Գորան Էրիկսոնին եւ Կիեւի «Դինամոյի» նախկին պաշտպան Միխայիլ Ֆոմենկոյին: Թեկնածուների թվում էին նաեւ Ֆելիքս Մագաթը, Ռոբերտո դի Մատեոն եւ Ալեքսանդր Զավարովը:**

**Ուկրաինայի հավաքականն առանց գլխավոր մարզչի էր մնացել սեպտեմբերի վերջից, երբ Օլեգ Բլոխինն ընդունեց Կիեւի «Դինամոյի» հրավերը: Գլխավոր մարզչի պարտականությունները դրվել էին Ալեքսանդր Զավարովի վրա, որի գլխավորությամբ Ուկրաինայի հավաքականն անհաջող անցկացրեց Մոլդովայի (0-0) եւ Չեռնոգորիայի (0-1) հետ կայացած ընտրական մրցախաղերը:**

**Սկզբում Ուկրաինայի ֆեդերացիայի նորընտիր նախագահ Անատոլի Կոնկովն առաջարկել էր հավաքականը գլխավորել Անդրեյ Շեւչենկոյին, սակայն վերջինս հրաժարվել էր: Դրանից հետո ֆեդերացիան բանակցել էր անգլիացի Գարի Ռեդնափի հետ, սակայն վերջինս նախընտրել էր «Քուինզ Փարկ Ռեյնջերսը»: Այլ թեկնածուների հարցում ֆեդերացիան հայտարարել էր, որ համապատասխան ֆինանսական միջոցներ չունի: Օրերս «Շախտյորի» սեփականատեր Ռինատ Ախմետովը հայտարարել է, որ պատրաստ է իր գրպանից վճարել հավաքականի գլխավոր մարզչի աշխատավարձը:**

**Ինչ վերաբերում է Էրիկսոնի եւ Ֆոմենկոյի թեկնածությանը, ապա մասնագետների կարծիքով, նրանց մարզչական կարիերայի լավագույն տարիներն արդեն հետեւում են մնացել: 64-ամյա Միխայիլ Ֆոմենկոյի վերջին ակումբը Սիմֆերոպոլի «Տավրիան» էր, որի օրոք թիմը հանդես եկավ Ինտերտոտոյի գավաթի խաղարկությունում: Սակայն 2008/09-ի մրցաշրջանի անհաջող մեկնարկից հետո նա ստիպված էր հեռանալ թիմից: Ֆոմենկոյի գլխավորությամբ Կիեւի «Դինամոն» 1993-ին նվաճել էր Ուկրաինայի չեմպիոնի տիտղոսը, իսկ մինչ այդ աշխատել էր Լանչխուտիի «Գուրիայում»: Ուկրաինայի առաջնությունում Ֆոմենկոն մարզել է Կիեւի ԲԿՄԱ-ն, «Մետալիստը», Զապորոժիեի «Մետալուրգը», սակայն թիմերն առանձնակի հաջողությունների չեն հասել:**

**Սվեն-Գորան Էրիկսոնը նույնպես 64 տարեկան է եւ համաշխարհային ֆուտբոլում անվանի մարզիչներից է: Սակայն վերջին հաջողությանը նա հասել է 2000-ին, երբ «Լացիոն» հասցրել է երկրի չեմպիոնի տիտղոսին:**

**Էրիկսոնի օրոք «Գյոթեբորգը» դարձել է Շվեդիայի չեմպիոն, «Բենֆիկան» 3 անգամ նվաճել է Պորտուգալիայի չեմպիոնի տիտղոսը, «Ռոման» եւ «Սամպդորիան» դարձել են Իտալիայի գավաթակիրներ: Բացի այդ, 1982-ին «Գյոթեբորգը» նվաճել է ՈւԵՖԱ-ի գավաթը, իսկ 1999-ին «Լացիոն» դարձել է գավաթակիրների գավաթի հաղթող:**

**2001-06-ին Էրիկսոնը գլխավորում էր Անգլիայի ազգային հավաքականը, որը 2002-ի եւ 2006-ի աշխարհի առաջնություններում, 2004-ի Եվրոպայի առաջնությունում պարտվել էր քառորդ եզրափակիչ փուլում:**

**Հավաքականում աշխատելու նրա 2-րդ փորձը տապալվեց: Նրա գլխավորությամբ Մեքսիկայի ընտրանին մեծ դժվարությամբ 2010-ի աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեց: Ճիշտ է, նա մեկնեց աշխարհի առաջնության որպես Կոտ դ՛Իվուարի հավաքականի գլխավոր մարզիչ, սակայն կոտդիվուարցիներին չհաջողվեց հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: Հետագայում Էրիկսոնն աշխատել է «Մանչեսթր Սիթիում» եւ «Լեսթեր Սիթիում»: Ներկայումս նա Թաիլանդի «Տերո Սասանա» թիմի տեխնիկական տնօրենն է:**

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Գյուղոլորտում «մերն ուրիշ է»-ն պարենանվտանգությանը չի նպաստում

Հայաստանից արտագաղթի հիմնական երկու բացատրություն է տրվում. օրենքների ընտրովի իրականացում եւ տնտեսական վիճակի անորոշություն: Առաջինին առավել հաճախ հակված են հասարակական գործիչները, երկրորդին՝ հանրության մնացյալ մասը: Վերջինի կողմնակիցներ են տողերիս հեղինակի գյուղա-քաղաքաբնակ մի քանի հարյուր ծանոթներն ու բարեկամները, հարազատներն ու ընկերները, երիտասարդ ու ավագ սերնդի մարդիկ: Անգամ համայնավարության ջատագով ծանոթս է նշում, որ կենցաղի փոքր-ինչ բարելավման պարագայում կդադարի իշխանություններին մեղադրելուց:

Թե ո՞րն է նվազագույն տանելի կենցաղը, ՀՀ քաղաքացիների հիմնական հատվածը կարծես պարզել է, որի վերհուշի կարգով հաճախ են հիշեցվում 1 ռուբլի 50 կոպեկ գնով պանիրն ու 2.20-ի երշիկը: Ինչո՞ւ հատկապես այս երկու սննդատեսակները. որովհետեւ մարդարարածն առաջնահերթը իր հիմնական սննդակարգում նախընտրում է կենդանական ծագման մթերքները, կաթն ու միսը, դրանց վերամշակված տարատեսակները: Համայնավար միտքը հաշվարկել էր այս գործոնը եւ անգամ պարենային լուրջ անբավարարության պայմաններում, թող որ ոչ որակյալ, պանիրն ու երշիկը մատչելի էր պահում բնակչության համար: Այսօր նույնկերպ է վարվում մերօրյա Չինաստանի կառավարությունը, որպիսի փաստեր, կապված երկրում մսամթերքների գների մատչելիության հետ, ներկայացրել ենք «Ազգում» տպագրված որոշ նյութերում: Ոչ վաղ անցյալում պարենապահովության լրջագույն խնդիրներ ունեցող այս երկրում պարենային առումով արմատական քայլեր իրականացվեցին, որոնցից թերեւս գլխավորը 2 բնակչի հաշվով 1 լիարժեք պահվող խոշոր կաթնամսատու, խոշոր եղջերավոր կամ խոզ ունենալն է: Այս ցուցանիշին հանդիպում ենք կայացած գյուղոլորտ ունեցող բոլոր պետություններում: 1980-ականների Չինաստանում պատկերը հետեւյալն էր. 1 մլրդ բնակչության հաշվով պահվում էր 340 մլն ցածր մթերատու նշված անասնատեսակ: Չինաստանում լավագույնս ընդօրինակեցին համաշխարհային փորձը, անասնագլխաքանակը լիարժեք կերակրելու նպատակով սկսեցին եգիպտացորենի հատիկ աճեցնել, մեկ տասնամյակի ընթացքում այս մշակաբույսի համախառն բերքը գրեթե զրոյական մակարդակից հասցնելով 160 մլն տոննայի, զուգահեռաբար ավելացնելով իրենց համար առաջնային համարվող բրնձի եւ մասամբ ցորենի արտադրությունները: Մտահղացումը շատ պարզ էր. լիարժեք անասնակերը կխթանի անասնագլխաքանակի աճը՝ ապահովելով ամենօրյա եկամուտ: Եվ չսխալվեցին. 2006-ին արդեն խոշոր կաթնա-մսատուի գլխաքանակը 630 մլն էր: 2009 թ. աշխարհում արտադրված խոզի մսի 106 մլն տոննայի մեջ Չինաստանի բաժինը կազմել է 50 մլն տոննա: 1 չինացու հաշվով մոտ 40 կգ խոզի մսի տարեկան արտադրությունը լավագույններից է, երբ ՀՀ-ում ցուցանիշը հազիվ 3 կգ է: 1990-2007 թթ չինացիների կողմից տավարի մսի սպառումն ավելացել է 5, հավինը 4 անգամ, եւ սա այն պարագայում, երբ երկիրը 1 բնակչի հաշվով ունի 800 քառակուսի մետր վարելահող, մեր ունեցած 2000 քմ-ի դիմաց: Ուրեմն ինչ զգացումով ենք ՀՀ-աբնակներս Չինաստանից օգնություն ստանում, երբ մոլորակի վրա կան երկրներ, որոնք հողաջրա-ջերմային առավել անբավարարություն ունեն, դրանցից բխող հետեւանքներով: Եթե որեւէ մեկը բերված գերհզոր երկրի պարագայում այլեւայլ առարկություններ ունի, հավելեմ, որ անասնատեսակների նշված համամասնությանն ենք հանդիպում նաեւ երբեմնի ԽՍՀՄ-ի մաս կազմած Էստոնիայում, ուր 1,2 մլն բնակչությանը համապատասխան 610 հազար խոշոր կաթնա-մսատու է պահվում, հարեւան Լիտվայում թվերը 3,5 մլն եւ 1,7 մլն են: Վերջինում մանր եղջերավորի գլխաքանակը 64 հազար է, նախորդում 81 հազար: Եվ հարցը՝ ինչո՞ւ Հայաստանի պարենային ապահովության եւ անվտանգության խնդիրը լուծելու կոչված կառույցները չեն իրականացնում ՀՀ-ին անհրաժեշտ նշված պարզ գործընթացները, ինչում է ինքնաբերաբար: ՀՀ 3 մլն բնակչության հաշվով արդեն հիշատակված 1,5 մլն գլուխ խոշոր կաթնա-մսատուի փոխարեն հազիվ 700 հազար առկա անասնագլխաքանակը, այն էլ թերասնման հետեւանքով աննշան մթերատվությամբ, արդյոք չի՞ փաստում երկրի պարենային ապահովությունը վտանգելու, գյուղաբնակին աղքատության մղելու մասին: Եվ ունենք վիճակ, երբ արտերկրների իրենց հարազատներից ստացած միջոցներով գոյատեւումն ապահովող հայ հանրությունը աշխատանք է երաշխավորում արտերկրների պարենարտադրողների համար, երբ իր համերկրացին անգործության է դատապարտված: Երբ անգամ խոզի միս չսպառող մահմեդական երկրներում է մանր եղջերավորի գլխաքանակի նվազում արձանագրվում, ասենք, Թուրքիայում երբեմնի 70 մլն-ից հիմա մնացել է 30 մլն, ի՞նչ նպատակ են հետապնդում ՀՀ գյուղնախարարությունում, ռազմավարական փաստաթղթերում կանխատեսելով ներկայիս 600 հազար ոչխարի աճ մինչեւ 1,5 մլն-ի հաշվով: Այսօրինակ թվերի հրապարակումը կարծես ինքնանպատակ գործ է հռչակվել: Ծանոթացեք պաշտոնական ընտրված մի հաղորդման: Ըստ ՀՀ գյուղնախարարության պաշտոնյաների հրապարակումների՝ 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ մանր եղջերավորի գլխաքանակը կազմել է 532 հազար: Նույն այս տարում ոչխարի ու այծի միս սպանդային քաշով արտադրվել է 8,4 հազար տոննա, որն, ըստ մսավաճառների, այս կենդանատեսակների 20 կգ միջին քաշի պայմաններում կարելի է ապահովել 420 հազար մանր եղջերավորի սպանդով: Հաջորդ տարվա համար մնում է 110 հազար, որոնք եթե բոլորն էլ մաքիներ լինեն, 2012-ի հունվարի 1-ի դրությամբ մանր եղջերավորի գլխաքանակը 200 հազարի չի հասնի, երբ պաշտոնական վիճակագրությունը նշում է 590 հազար թիվը: 8,4 հազար տոննայի պարագայում 1 հայաստանաբնակի հաշվով ստացվում է տարեկան միջին 2,5 կգ ոչխարի մսի սպառում, ասել է թե տողերիս հեղինակի 3 անձից բաղկացած ոչ նպաստառու ընտանիքը վերջին տարիներից յուրաքանչյուրում սպառել է 7-8 կգ ոչխարի միս: Վստահեցնում եմ, որ անգամ 7-8 տարիներին 0,5 կգ այս անասնատեսակի միս չենք գնել. գնման եզակի 1-2 փաստ արձանագրեցինք շրջապատի տասնյակ դարձյալ ոչ նպաստառու ընտանիքներում: Այսօրինակ գործելաոճով գյուղոլորտում աճ ցուցադրելը ոչ մի հիմնավորում չունի, առավել եւս, որ այն ուղեկցվում է գյուղացիական տնտեսությունների վիճակի վատթարացումով ու արտագաղթով:




Ի՞նչ նպատակ է հետապնդում համանման վիճակագրության տարածումը. ցուցադրելու, որ հարկատուների միջոցներով գոյացող ՀՀ բյուջեի հաշվին պահվող պետական կառույցը մասնագիտական գործունեություն է իրականացնում: Այս պարագայում հարցնենք. իսկ որտե՞ղ է կառույցի հիմնական շահառուն, գյուղաբնակը, որը պարբերաբար լքում է իր բնակավայրը, մեկնում արտերկրներ, ուր նույնպես շատ հաճախ օրենքների ընտրովի իրականացման պայմաններում, որոնց ոչ այստեղ, ոչ այնտեղ ինքը գրեթե չի առնչվում, գոնե տնտեսապես բավարար գոյատեւելու հնարավորություն ունի: Ուրեմն ինչո՞ւ այլոց օրինակով նշված պարզ գործընթացը չստեղծել իր բնօրրանում, ինչո՞ւ գյուղաբնակի գործունեության արդյունավետության հիմքում չդնել կենդանական ծագման սննդատեսակների որակյալ եւ բավարար արտադրության ծավալումը: Պարզ է, չէ՞, որ գյուղոլորտի այս ճյուղն է ամենօրյա եւ պարբերական միջոցներ ստեղծում, իրացման ոչ մի խնդիր չկա, կխթանվի վերամշակող ոլորտը: Առավելություններն այնքան են ակնհայտ, որ ճյուղը ամենուր գյուղգործունեության հիմնախնդիր են համարում: Փոքրիկ Էստոնիայից մինչեւ գերհզոր Չինաստան իրականացված գործընթացներն այս մասին են փաստում, որը մեզանում ցավալիորեն փորձ է արվում չտեսնելու տալ, առաջնորդվելով «մերն ուրիշ է» այսօրվա վիճակը բնորոշող կարգախոսով, ՀՀ պարենային ապահովությունը վտանգելով:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՇՌԱՅԼՈՒՄՆԵՐ

## Ի՞նչ կարելի էր անել ...

*2-րդ էջից*

Կարելի էր առավել համեստ զարդարանք ու մշակութային ներկայացում ընտրել ու մնացյալ գումարն ուղղել սոցիալապես անապահով խավի երեխաներին որոշակի կերպով աջակցելուն: Քաղաքապետարանի ծրագիրը կողջունվեր, եթե՝ ասենք, վերոնշյալ 34 միլիոն դրամի գոնե կեսն ուղղեին բարեգործական նպատակներով, օրինակ, այցելեին մանկատներ ու ծերանոցներ եւ փոքրիկ նվեր մատուցեին, մայրաքաղաքի աղքատ հատվածի գոնե գազի կամ լույսի մեկ կամ երկու ամսվա վարձավճարը մուծեին, որպեսզի ամանորյա տոներն ու հրաշքն այցելեին նաեւ նրանց: Բարեգործական նման միջոցառումները, հատկապես տոների նախօրյակին, ընդունված եւ ողջունելի ծրագրեր են բազմաթիվ քաղաքներում: Այն փողոցները, որտեղ տեղակայված են բիզնես կենտրոնները, բրենդային խանութները, սրճարաններն ու ռեստորանները, քաղաքապետարանը պահանջում է, որ զարդարեն հենց այդտեղ բիզնես գործունեություն ծավալող ընկերությունները: Նման մոտեցում են տարիներ շարունակ ցուցաբերում Փարիզում, Աթենքում, Վարշավայում: Սա երկուստեք եկամտաբեր տարբերակ է, որովհետեւ քաղաքապետարանը գումար է խնայում այդ փողոցների լուսավորման համար, իսկ բիզնես կենտրոնները առավել շատ հաճախորդներ են ունենում:

Վերջին շրջանում անընդհատ հայտնաբերվող չարաշահումների ֆոնին մտահոգություն է առաջանում՝ արդյոք ամբողջ գումարը ծախսվելո՞ւ է լուսավորման եւ զարդարանքի համար եւ քաղաքի ճոխ լուսավորությունն ու զարդարանքը հերթական չարաշահումը կոծկելու մի տարբերակ չե՞ն:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




## ՕՐԱԿԱՐԳ

**2012թ. դեկտեմբերի 20-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի**

▼ «Էկաս» ՍՊԸ (ՇԽ-163 լիցենզիա) կողմից ներկայացված շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգի փոփոխությանը համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Նիկմիլ 777» ՍՊԸ (ՇԽ-236 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի քննարկում:

▼ «Նաշ Սադ» ՍՊԸ (ՇԽ-132 լիցենզիա), «Նիկմիլ 777» ՍՊԸ (ՇԽ-236 լիցենզիա) եւ «Լառա եւ Արմինե» ՍՊԸ (ՇԽ-237 լիցենզիա) շահումով խաղերի կազմակերպման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու հարցերի քննարկում:

«Վիվառո Գեյմ» ՍՊԸ կողմից ներկայացված խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու հայտի քննարկում:

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

ВТБ

**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հարգելի հաճախորդներ,**

14.12.2012թ.-ից 28.02.2013թ. ընկած ժամանակահատվածում անցկացվող վերանորոգման աշխատանքների կապակցությամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Գ.Նժդեհի փողոց 8 շենք, h.52 հասցեում գտնվող «Շենգավիթ» մասնաճյուղի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սպասարկումը կիրականացվի հետեւյալ մասնաճյուղում՝

▼ **Թիվ 35 մասնաճյուղ եւ հասցե. ք.Երեւան, Շենգավիթ համայնք, Բագրատունյաց փ., h.13 շենք, h.113:**

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք զանգահարել Բանկի միասնական տեղեկատվական կենտրոն +(374 8000) 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի ղեկավարությունը հայցում է Ձեր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:

***ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ***

Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր
ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԴԱՌՆԱԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ:

***«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ***

եթե ուզում եք լինել պրոֆեսիոնալ

**Բաղրամյան 24դ,**
**հեռ. 54-24-81, 54-74-81**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 13.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: